

**«ԶՕՐԱՑ ՔԱՐԵՐ»**  
**ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ**  
**ՈՐՈՇ ՆՈՐ ԱՐԴԻԻՆՔՆԵՐ**  
**(ՀԱՐԹԱԿ 3)**

**1. ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ**

Անդրադառնալով «Զօրաց Քարեր» յուշարձանում յայտնաբերուած դիտահարթակներից երկուսի (Հարթակներ 1<sup>1</sup> եւ 2<sup>2</sup>) աստղագիտական քննութեանը պէտք է նշել, որ դրանք առայժմ լիարժէք ուսումնասիրուած չեն: Քննութեան առարկայ են մնում այդ դիտահարթակների հետ կապակցուած ուղղորդիչ վէմերի (թիւ 60, 62, 64, 66 եւ 160) վրայ առկայ անցքերի ուղղութիւնները եւ նշանակութիւնը: Այս խնդրին, սակայն, կարելի կը լինի վերադառնալ միայն այն դէպքում, երբ նշուած վէմերի անցքերի ուղղութիւնների տուեալները հասանելի կը լինեն<sup>3</sup>: Մինչ այդ դիտարկենք յուշարձանում յայտնաբերուած երրորդ դիտահարթակը (Հարթակ 3): Թէեւ այս դիտահարթակը իր տեղակայումով աւելի մօտ է Հարթակ 1-ին, սակայն բացայայտուել է Հարթակ 2-ից յետոյ: Այդ է պատճառը, որ դրանց համարակալումները որոշակիօրէն յաջորդական դասաւորութիւն չունեն: Համարակալումները բխում են դիտահարթակների յայտնաբերման յաջորդականութիւնից: Յուշարձանում Հարթակ 1-ի եւ 2-ի ի յայտ գալուց յետոյ բնական էր փնտռել նման հարթակներ յուշարձանի ամբողջ տարածքում: Այս փնտռտուքի ընթացքում հաշուի էր առնուած արդէն ի յայտ եկած դիտահարթակների սկզբունքային կառուցուածքը: Թուարկենք այն յատկանիշները, որոնք ընդհանուր են Հարթակ 1-ի եւ 2-ի համար:

- 
- 1 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ. - ՄԱԼԽԱՍԵԱՆ, Հ., «Զօրաց Քարեր» յուշարձանի վերջին չափագրումից բխող որոշ նախնական արդիւնքների մասին, ի «Բազմավէպ», 179 (2021), 3-4, 107-148:
  - 2 ՄԱԼԽԱՍԵԱՆ, Հ., «Զօրաց Քարեր» յուշարձանի ուսումնասիրութեան որոշ նոր արդիւնքներ. (Հարթակ 2), ի «Բազմավէպ», 179 (2021), 3-4, 149-199:
  - 3 Վէմերի անցքերի ուղղութիւնների վերջնական յստակեցման աշխատանքները ընթացքի մէջ են:

- Երկուսն էլ տեղակայուած են Վէմերի հիմնական շարքից դուրս՝ դէպի արեւմուտք:
- Մեծ չափերով, որոշակի հարթ մակերեւոյթով սալաքարեր են, որոնք հորիզոնական դիրքով խրուած են հողի մէջ:
- Դրանց վրայ երբեմն որոշակիօրէն մականշուած է դիտողի կանգնելու կէտը:
- Դիտողի տեսադաշտում որոշ վէմերի վերնամասեր հպւում են հորիզոնին:
- Վէմերի վերնամասերի ձեւուածքները հիմնական գծերով կրկնում են տուեալ ուղղութեամբ հորիզոնի ուրուագիծը՝ բացառութիւն է կազմում թիւ 158 վէմը<sup>4</sup>:
- Հարթակների հետ կապակցուած են թէ՛ անցքաւոր եւ թէ՛ անկիւնաւոր, ուղղաձիգ դիրքով հողում խրուած վէմեր:

Նշուած ընդհանրութիւնները ի մտի ունենալով դիտահարթակների յետագայ փնտռտուքը «խարիսխ ձգեց» թիւ 29ա թուանշումով<sup>5</sup> մի սալաքարի վրայ: Այս սալաքարը յետագայ շարադրանքում կ'անուանենք Հարթակ 3: Այն որոշակիօրէն տարբերուում է Հարթակներ 1-ից եւ 2-ից: Եթէ վերջիններս առաւելապէս հորիզոնական դիրք ունեն, ապա Հարթակ 3-ը տեղադրուած է որոշակի թեքութեամբ: Սակայն սալի արեւմտեան մասը, որ աւելի բարձրադիր է, որոշակիօրէն հարթւում է: Սա կարելու է այնքանով, որ թեք հատուածում կանգնելը բաւականին անյարմար է, իսկ բարձր կէտում՝ պատուանդան-հարթակ է յիշեցնում: Ահա այս բարձրադիր կէտում կանգնելիս եւ դէպի արեւելք դիտելիս տեսադաշտում թուով 4 վէմերի (թիւ 7, 19, 27 եւ 201) վերնամասեր<sup>6</sup> հպւում են հորիզոնին (նկար 2 եւ 5): Վէմերից առաջին երեքը մաս են կազմում կենտրոնական շեղանկիւնաձեւ վիմաշրջանի («կրումլեխ») եւ ուղղաձիգ դիրքով խրուած են հողի մէջ: Հետաքրքիր է, որ դրանցից իւրաքանչիւրը (թիւ 7, 19 եւ 27) իր

4 Ինչպէս կը պարզուի յօդուածիս յետագայ շարադրանքում՝ նման երեւոյթը բնաւ էլ բացառութիւն չէ եւ ունի իր տրամաբանական բացատրութիւնը:

5 Պ. Հերունու համարակալումներում այս սալաքարը նշուած է թիւ 29ա եւ համարուում է ընկած եւ տեղաշարժուած կենտրոնական վիմաշրջանի վէմերից մէկը: Տե՛ս ՀԵՐՈՒՆԻ, Պ., Հայերը եւ հնագոյն Հայաստանը, «Տիգրան Մեծ», Երեւան 2006, նկ. 18, աղ. 1, 20-21:

6 Թիւ 19 վէմի պարագան մի փոքր այլ է: Այն ունի ձեւակերտ կտրուածք եւ հորիզոնին հպւում է իր կտրուածքի ստորին, հորիզոնական կողմով: Աւելի մանրամասն տե՛ս Ենթավերնագիր 2.2 եւ նկար 5:



տաշուածքով առանձնանում է միւսներից եւ յուշարձանում առկայ մնացեալ վէմերից: Ինչպէս արդէն յայտնի է, վէմերի ձեւաւորմանը ունեն յստակ բովանդակութիւն: Մասնաւորապէս ցոյց է տրուել, որ թիւ 12 եւ 13 անկիւնաւոր վէմերի վերնամասերի ձեւաւորմանը դրուած է Մայր աստուածութեան գաղափարը<sup>7</sup>: Որոշակիօրէն պարզուել են նաեւ թիւ 158 վէմի տաշուածքի գաղափարական հիմքերը<sup>8</sup>: Ուստի յոյժ կարեւոր է անդրադառնալ նաեւ աստ քննարկուող վէմերի ձեւաւորմանը, ինչը հնարաւոր կը լինի միայն դրանց գործառնոյթը պարզելուց յետոյ:


Միւս տարբերութիւնն այն է, որ Հարթակ 3-ի վրայ որեւէ կերպ յստակ նշուած չէ դիտողի կանգնելու կէտը: Այդ իմաստով սալի վերը նշուած բարձրադիր հատուածը ըստ երեւոյթի պէտք է համարել հէնց կանգնելու կէտը: Նշենք, որ կանգնելու կէտի մականշումը միայն լրացուցիչ կողմնորոշիչ է հանդիսանում Հարթակների համար: Այստեղ աւելի կարեւոր է սալաքարի մակերեւոյթի որեւէ կէտում կանգնելիս տեսնլ «կապակցուած» (ուղղորդել) վէմերի վերնամասերի եւ հորիզոնի ուրուագծերի համադրութիւնը: Միեւնոյն ժամանակ, Հարթակ 3-ի պարագայում ուղղորդիչ վէմերը բաւական մեծ հեռաւորութեամբ են տեղակայուած (աղիւսակ 1), ինչը կարեւոր է դիտման ճշգրտութեան առումով: Բացի այդ Հարթակի եւ վէմի միջեւ եղած մեծ հեռաւորութեան պարագայում երկրորդական է դառնում այն հարցը, թէ սալի ո՞ր հատուածում պիտի կանգնի դիտողը, քանի որ ազիմուտային շեղումները ստացւում են բաւական փոքր եւ նման խնդիրների պարագայում կարելի է անտեսել: Նշենք, որ այստեղ դիտարկուած են այն ուղղութիւնները որոնք ձեւաւորւում են Հարթակ 3-ի արեւմտեան բարձրադիր կէտում կանգնած դիտողի դէպքում, զի այս կէտում կանգնելու պարագայում վէմերի վերնամասերի եւ հորիզոնի ուրուագծերի տեսողական համադրութիւնը առաւել յստակ է:

Ինչ վերաբերում է թիւ 201 վէմին, ապա այստեղ կան որոշ խնդիրներ, որոնք կապուած են վէմի դիրքի հետ (տե՛ս ենթավերնագիր 2.4): Հարթակ 3-ից դէպի այս վէմը ձգուող ուղղութեան աստղագիտական քննութիւնը, գուցէ, վեր հանի թէկուզ մօտաւոր պատկերացումներ դրա դիրքի եւ գործառնոյթի վերաբերեալ:

7 MALKHASYAN H., On "Observational Instruments" composed of Stones No. 12, 13 and 14 of "Zorats Qarer" Monument, ComBAO, 2022, Vol. 69, Issue 1, pp. 100-121. DOI: <https://doi.org/10.52526/25792776-2022.69.1-100>

8 ՄԱԼԽԱՍՅԱՆ, Հ., «Զօրաց Քարեր», մշ. աշխ., ամս.:

Արդ տեսնենք, թե ի՞նչ տեղ է յատկացուած յուշարձանի կառուցուածքում Հարթակ 3-ին եւ դրա հետ առնչուող վէմերին:




Նկար 1. Հարթակ 3. քնդհանուր տեսքը: Սլաֆներով ցոյց են տրուած Հարթակից դէպի թիւ 7, 19, 27 եւ 201 վէմերը ձգուող ուղղութիւնները:

## 2. ՀԱՐԹԱԿ 3-Ի ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս նշուեց, Հարթակ 3-ը տեղակայուած է կենտրոնական շէղանկիւնաձեւ վիմաշրջանի հիւսիս-արեւմտեան կողմում (նկար 1), եւ դուրս է վիմաշարի տրամաբանութիւնից: Միայն այն, որ դրա վրայ կանգնելիս որոշ վէմերի վերնամասեր հպուած են հորիզոնին բաւական է ենթադրելու համար, որ այսպիսի կառուցուածքային միաւորը հանդիսանում է դիտողական գործիք: Սակայն, ի տարբերութիւն Հարթակներ 1-ի եւ 2-ի այստեղ կայ եւս մէկ, լրացուցիչ հանգամանք նման պնդման օգտին: Բանն այն է, որ եթէ ուշադրութիւն դարձնենք նկար 1-ին, ապա կը նկատենք, որ թիւ 7, 19 եւ 27 վէմերը տեղակայուած են շէղանկիւնաձեւ վիմաշրջանի համապատասխանաբար արեւելեան, հարաւային եւ արեւմտեան գագաթներում: Միեւնոյն ժամանակ թիւ 201 վէմը, որ կենտրոնական կառույցի ծածկի մաս է, հանդիսանում է նաեւ նոյն կրումլեւի կենտրոնը:

Փաստորէն ունենք մի հարթակ, որի հետ կապակցուած թուով 4 ուղղորդիչ վէմերից երեքը տեղակայուած են շեղանկիւն վիմաշարի երեք գագաթներին իսկ մէկը դրա կենտրոնում: Նման երեւոյթը, անշուշտ, աւելի հիմնաւոր է դարձնում Հարթակ 3-ի գոյութիւնը իբրեւ դիտահարթակ: Միւս կողմից էլ, եթէ գործ ունենք կենտրոնական վիմաշրջանի գագաթների հետ, ապա բնական է մտածել, որ այս ուղղութիւնները եւ դրանց ուղղորդիչ վէմերը յուշարձանը շահագործողների համար յոյժ կարեւոր պիտի եղած լինեն: Այստեղ պէտք է նշել նաեւ, որ Հարթակից դիտելիս շեղանկեան հիւսիսային գագաթին մօտ տեղակայուած վէմերի գագաթները որեւէ կերպ հորիզոնին չեն առնչուում: Այս ուղղութեամբ իշխանասարի զանդուածն է, իսկ վէմերի գագաթները իրական հորիզոնի նկատմամբ բաւականին ցածրադիր են՝ նշուած դիտակէտից դիտողի համար: Այսպէս, եթէ շեղանկեան գագաթներում տեղակայուած վէմերը յատուկ նշանակութիւն են ունեցել դիտողների համար, ապա հարկ է առաւել մանրամասն անդրադառնալ այդ վէմերի տաշուածքների առանձնաշատկութիւններին, քանի որ, ինչպէս գիտենք, յուշարձանում վէմերի տաշուածքներին ընդհանրապէս տրուել է յատուկ նշանակութիւն<sup>9</sup>: Նայենք աւելի մանրամասն:



Նկար 2. Համայնապատկեր լուսանկար Հարթակ 3-ից դէպի հարաւ-արեւելք, 2020 թուական: Թուանշուած են քննարկուող վէմերի համարները: Թիւ 29 վէմն ընկած է:

9 ՄԱԼԽԱՍԵԱՆ, Հ., «Զօրաց Քարեր» յուշարձանի թիւ 12, 13 եւ 14 «դիտողական գործիքների» համապարփակ քննութեան արդիւնքների վերաբերեալ, ի «Բազմավեկ», 181 (2023), 1-2, 125-182:



## 2.1. ԹԻԻ 7 ՎԷՄԻ ՆԿԱՐԳՐՈՒԹԻԻՆԸ

Ինչպես երեւում է նկար 3-ում՝ Թիւ 7 վէմի գագաթը ստածայր է: Վէմի հիւսիսային կողմը կորագիծ-աղեղաձեւ տեսք ունի (ըստ երեւոյթի յատուկ տաշուած է), իսկ հարաւային կողմը ուղղաձիգ է: Նկարում ակնյայտ երեւում է նաեւ դրայ վերնամասում առկայ յատուկ դիտողական անկիւնը, որը խիստ ոճական է եւ գրեթէ կրկնում է Թիւ 13, 158, 197 եւ 198 վէմերի դիտողական անկյունների ձեւը<sup>10</sup>: Այս անկիւնը նոյնպէս ունի որոշակի գոգաւորութիւն եւ ուղղուած է հորիզոնից էապէս բարձր կէտի (աղիւսակ 1): Ուստի Թիւ 7 վէմը միանշանակ պէտք է դասել մինչ այժմ յայտնի միւս անկիւնաւոր վէմերի շարքին: Այս անկիւնը, սակայն, ի տարբերութիւն մնացեալ անկիւնավոր վէմերի բաւական բարձր դիրք ունի (աւելի քան 1,5մ) եւ դրա ուղղութեամբ դիտելը շատ յարմար է կանգնած դիրքում այլ ոչ թէ ծնկած<sup>11</sup>: Յստակ է նաեւ այն, որ Թիւ 7 վէմը ուղղաձիգ կանգնած է իր նախնական դիրքով: Այսինքն, որեւէ պատճառ չկայ դրայ դիրքը տեղաշարժուած կամ թէքուած համարելու: Ուստի լիովին ընդունելի է դրայ վերնամասի անկեան ուղղութեան աստղագիտական քննութունը, նոյնպէս կատարել Հարթակ 3-ի քննութեանը զուգընթաց:



Նկար 3. Թիւ 7 վէմը արեւելեան կողմից: Լուսանկարը արուած է մեր արշաւախմբի կողմից 2020թ.

10 ՄԱԼԽԱՍԵԱՆ Հ., 2021, նոյն տեղում: MALKHASIAN H. A., 2022, 69(1), Ibid.

11 MALKHASIAN H. A., *Archaeoastronomy. On "Observational Technologies" in Ancient Armenia*, Communications of BAO, 2022, Vol. 69, Issue 2, 324-339.

## 2.1. ԹԻԻ 19 ՎԷՄԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

12 ՄԱԼԽԱՍԵԱՆ Հ., 2021, Գոյն տեղում:



Այսինքն, որպէսզի թիւ 19 վէմը եւ դրա կտրուածքը կիրառուի որպէս դիտողական գործիք անհրաժեշտ է յաւելեալ կողմնորոշիչ, կամ որեւէ այլ լրացուցիչ հանգամանք: Բացի այդ, թիւ 19 վէմը կարելի է համարել նաեւ երկգագաթ, ըստ որում, այդ գագաթները միեւնոյն բարձրութեան չեն: Դրանցից արեւելեանը աւելի ցածր է արեւմտեանից (նկար 4 եւ 5):




Նկար 4. Թիւ 19 վէմը հիւսիսային կողմից: Լուսանկարը արուած է մեր արշաւախմբի կողմից 2020ին:

Նշելի է, որ Հարթակ 3-ից դիտելիս այս վէմի վերնամասի ուղղութեամբ տեսանելի է երկգագաթ մի լեռ, որի գագաթները նոյնպէս տարբեր բարձրութեան են. արեւելեանը աւելի ցածր է արեւմտեանից (նկար 2 եւ 5): Աւելին, Հարթակից դիտելիս հորիզոնի ուրուագծին համադրւում է ոչ թէ վէմի գագաթները այլ դրա կտրուածքի հորիզոնական նիւը, որ համընկնում է երկու լեռնագագաթների միջեւ յայտնուող լեռնալանջին (նկար 5): Ընդ որում լեռնալանջի այս հատուածը ունի որոշակի թեքութիւն, որ նոյնպէս համընկնում է վէմի կտրուածքի հորիզոնական հատուածի թեքութեանը: Ահա այս լրացուցիչ հանգամանքների ի յայտ գալով էլ բացատրւում է թիւ 19 վէմի կիրառելի լինելը որպէս դիտողական գործիք: Միւս կողմից, ինչպէս նշուեց, թիւ 19 վէմի կտրուածքը բաւականին լայն է (12սմ) առանձին ուղղութիւն ցուցանելու համար: Սակայն Հարթակ 3-ից դիտելիս,



ի հաշիւ դրանց միջեւ եղած մեծ հեռաւորութեան (մօտ 40մ, աղիւսակ 1), դիտման ուղղութիւնը եւ դրա ճշգրտութիւնը դառնում է խիստ որոշակի: Անկիւնային սխալը ( $\sigma$ ) կազմում է.

$$\sigma = \arctg\left(\frac{0,06}{40}\right) = 00^{\circ}05'09''$$



Նկար 5. Ցոյց է տրուած քիւ 19 վեմի կտրուածքի ստորինն նիշի համընկումը Հարթակ 3-ից դիտուող հորիզոնի երկգագաթ լեռան լանջին:

Պէտք է նշել նաեւ, որ թիւ 19 վեմին որեւէ այլ գործառնոյթ վերագրելը բաւական դժուար է: Եթէ դիտարկում ենք թիւ 19 վեմը յուշարձանի այլ կառուցուածքային միաւորներից զատ, ապա, առհասարակ, անհասկանալի է դառնում դրա նշանակութիւնը: Պէտք է շեշտել թիւ 19 վեմի եւ Հարթակ 3-ի կապը հաստատող եւս մէկ իրողութիւն: Այն, որ Հարթակ 3-ից թիւ 19 վեմի ուղղութեամբ դիտողի տեսադշտում պէտք է յայտնուէր թիւ 28 եւ 30 վեմերի միջեւ գտնուող թիւ 29 (ընկած) եւ ենթադրաբար գոյութիւն ունեցած եւս մի վեմ: Սրա մասին է վկայում թիւ 29 (ընկած) եւ թիւ 30 վեմերի միջեւ եղած համեմատաբար մեծ հեռաւորութիւնը (նկարներ 1 եւ 2): Այդ հեռաւորութիւնը գրեթէ կրկնակի անգամ մեծ է անխախտ շարուածքով վեմերի միջեւ եղած միջին հեռաւորութիւնից: Այս հանգամանքը թոյլ է տալիս ենթադրել, որ կամ թիւ 29 եւ 30 վեմերի միջեւ սկզբնական կառուցուածքում պիտի եղած լինէր եւս մէկը, կամ էլ այդ տեղում վեմի բացակայութիւնը յատուկ նպատակ է ունեցել: Նման շարուածքն էլ հէնց հիմք է ծառայել այն վարկածի, որ Հարթակ

3-ը (թիւ 29ա վէմը) իր նախնական դիրքով մաս է կազմել կենտրոնական վիմաշրջանի<sup>13</sup>: Այսպիսի ենթադրութիւնը, իհարկէ, որոշակիօրէն կարող է պարզուել տուեալ ուղղութեամբ դիտելի լուսատուների եւ դրանց դիտման ժամանակների ու պայմանների քննութեամբ:

### 2.3. ԹԻԻ 27 ՎԷՄԻ ՆԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Վերը նշուած ուղղորդիչ վէմերից Հարթակ 3-ին ամենամօտն է տեղակայուած թիւ 27 վէմը: Թիւ 27-ը նաեւ շեղանկիւնաձեւ վիմաշրջանի արեւմտեան գագաթն է: Հարթակ 3-ից դիտողի տեսադաշտում այս վէմի գագաթը համադրուում է հորիզոնի ընդգրծուած գագաթներից մէկին (նկարներ 2 եւ 6): Ընդ որում վէմի վերնամասի ձեւուածքը ընդհանուր գծերով կրկնում է հորիզոնի տուեալ ուղղութեան ուրուագիծը: Նման տաշուածքներ առկայ են նաեւ նախկինում քննարկուած թիւ 60, 62 վէմերի պարագայում Հարթակ 1-ից դիտողի համար<sup>14</sup>:



Նկար 6. Թիւ 60 եւ 62 վէմերի վերնամասի համադրութիւնը հորիզոնի ուրուագծին Հարթակ 1-ից դիտողի տեսադաշտում: Թիւ 27 եւ 7 վէմերի գագաթների հպումը հորիզոնին Հարթակ 3-ից դիտողի տեսադաշտում:

Նկար 6-ում յստակ տեսանելի է այդպիսի օրինաչափութիւնը, ինչը լրացուցիչ կերպով գալիս է հաստատելու, թէ՛ թիւ 27 վէմի Հարթակ 3-ի հետ կապուած լինելը, եւ թէ՛ Հարթակ 3-ի դիտողական լինելը: Միով բանիւ յուշարձանում ունենք դիտահարթակների եւ ուղղորդիչ վէմերի տեղադրման որոշակի սկզբունքային մօտեցում՝ կարելի է ասել օրինաչափութիւն: Նոյնը չի կարելի ասել թիւ 7 վէմի համար: Այստեղ ունենք համեմատաբար հարթ հորիզոն, իսկ վէմի վերնամասը սրածայր գագաթի

13 ՀԵՐՈՒՆԻ, Պ., նշ. աշխ., 21:

14 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ. - ՄԱՆԽԱՍԵԱՆ, Հ., նշ. աշխ.:

տեսք ունի (նկար 6): Սա նույնպես ունի բացատրություն: Համեմատաբար հարթ հորիզոնի պայմաններում դրա վրայ որեւէ կէտ ստոյգ նշանացնելու համար հարկաւոր է հէնց սրածայր, կամ շատ փոքր լայնութեան ինչ-որ ուղղորդիչ: Ահա այդպիսին է թիւ 7 վէմի վերնամասը: Բաւականին փոքր բացուածք է նաեւ թիւ 19 վէմի կտրուածքը, որ ուղղուած է համեմատաբար հարթ լեռնալանջին: Նոյն մօտեցումը առկայ է Հարթակ 2-ից թիւ 158 վէմի գազաթի հպման կէտը հորիզոնին համադրման դէպքում<sup>15</sup>: Բացի նշուած բնութագրական յատկանիշներից թիւ 27 վէմը առանձնանում է նաեւ «փշակաձեւ-խոռոչաւոր» կառուցուածքով: Վէմը իր արեւմտեան կողմում ունի փորուածք-փշակ իր ամբողջ երկարութեամբ: Այլ կերպ ասած, եթէ վէմին նայենք վերեւից այն կ'ուենայ կիսաշրջանի կամ աղեղի տեսք, որ արտափքուած է դէպի արեւելք (նկար 7): Ի՞նչ բովանդակութիւն ունի թիւ 27 վէմի նման ձեւը: Այս հարցին հնարաւոր կը լինի պատասխանել միայն դրա գործառնոյթը յստակեցնելուց յետոյ:



Նկար 7. Թիւ 27 վէմը բուայնացուած կետային ամպի տեսքով: Վերեւից աղեղաձեւ: Հարաւարեւմուտքից փշակաւոր, կէտագծերով ցոյց է տրուած հնարաւոր կոտրումը հատուածը:

15 ՄԱԼԽԱՍԵԱՆ Հ., «Զօրաց Քարեր», նշ. աշխ., 2021, անդ:



#### 2.4. ԹԻԻ 201 ՎԷՄԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻԻՆԸ

Նախ նշենք, որ թիւ 201 վէմը գտնուում է կենտրոնական կառոյցի վրայ, մաս կազմելով դրա ծածկի սալաքարերի (նկար 1 եւ 8): Այսինքն, որպէս այդպիսին վէմերի շարքի մաս չի կազմում եւ դժուար է որեւէ կերպ դրա դիրքը համարել նախնական: Միւս կողմից էլ թիւ 201 վէմը իր ձեւուածքով նոյնպէս առանձնանում է մնացեալ վէմերից (նկար 8):



Նկար 8. Կենտրոնական կառոյցի ծածկի մաս կազմող ԹԻ 201 վէմը հիւսիս-արեւմուտից: Սեւ սլաքները ուղղուած են կոտորուած անցքերին, իսկ սպիտակը՝ ամբողջականին: Լուսանկարը արուած է մեր արշաւախմբի կողմից 2021ին:

Առանձնայատկութիւնն այն է, որ այս վէմը իր վերնամասում ունի թուով 3 տարբեր ուղղութիւններով անցքեր, որոնցից ամբողջական է միայն մէկը (նկար 8): Միւս երկուսը կոտրուած են, սակայն յստակ տարբերակում է դրանց նախկինում անցք եղած լինելը: Միեւնոյն ժամանակ կենտրոնական կառոյցում պեղումներ ժամանակ հնարաւոր է խախտուել է դրա ծածկի սալաքարերի նախնական դիրքերը (այդ են վկայում, որոշ լուսանկարներ պեղումների ընթացքից): Պէտք է նշել, սակայն, որ թիւ 201 վէմի դիրքի զննութեամբ՝ տեղաշարժուած համարելու որեւէ ակնառու պատճառ չի նկատուում, աւելին այն ամուր սեղմուած է ծածկի յարակից սալաքարերով մի քանի կողմերից: Դրա դիրքը, անշուշտ չի կարելի համարել նախնական, քանի որ այժմեան դիրքում դրա 3 անցքերին դժուար է որեւէ գործառնոյթ վերագրելը: Մանաւանդ, որ այդ անցքերին որ կողմից էլ նայենք կ'ունենանք փակ տեսադաշտ, իսկ որոշ կողմերից էլ անցքից դիտելը ուղղակի անհնար է՝ միւս ծածկասալերի կիպ հպուած լինելու պատճառով: Այնուամենայնիւ, թիւ 201 վէմը արժէ քննել Հարթակ 3-ի համատեքստում, ստուգելու համար դրա ուղղորդիչ լինելու իսկութիւնը: Արդ տեսնենք թէ ինչ ուղղութիւններ են ձեւաւորուում Հարթակ 3-ից դիտելիս:

### 3. ՀԱՐԹԱԿ 3-ԻՑ ԴԻՏՈՒՈՂ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այսպէս, Հարթակ 3-ի եւ նշուած 4 վէմերի օգնութեամբ յստակ ձեւաւորուում են 4 ուղղութիւններ: Միւս կողմից թիւ 7 վէմի վերնամասի անկիւնը նոյնպէս յստակ ուղղութիւն ունի: Այսինքն գործ ունենք թուով 5 ուղղութիւնների հետ, որոնք յստակ որոշուած են 2020 թուականի չափագրական տուեալներով: Նշուած 5 ուղղութիւնները, ինչպէս նաեւ, վէմերի եւ Հարթակի միմեանցից ունեցած հեռաւորութիւնները տրուած են աղիւսակ 1-ում:

Ինչպէս տեսնում ենք աղիւսակի տուեալներում 5 ուղղութիւններից միայն երկուսի՝ Հարթակ 3-ից թիւ 7 եւ 201 վէմերի գազաթնների ուղղութեամբ է հնարաւոր դիտել արեւածագը, Լուսնի ծագումը եւ տեսանելի մոլորակների ծագումները: Թիւ 7 վէմի

ուղղութեամբ արեւածագը կարելի է դիտել ԳԳ<sup>16</sup>-ից 19 օր առաջ եւ ԱԳ-ից 19 օր յետոյ: Թիւ 201 վէմի ուղղութեամբ Արեւածագը կը դիտուի ԳԳ-ից 36 օր առաջ եւ ԱԳ-ից 36 օր յետոյ<sup>17</sup>: ԳԳ-ից 36 օր առաջուայ օրը ճշգրիտ համընկնում է Տեառնընդառաջին<sup>18</sup> (այօրուայ օրացոյցի համաձայն եթէ Մարտի 21-ից՝ ԳԳ-ից, յետհաշուարկ կատարենք 36 օր, ապա կը ստացուի Փետրուարի 13ը), որն անկասկած նախաքրիստոնէական ժամանակների ծիսակարգ է<sup>19</sup>: Միեւնոյն ժամանակ ԱԳ-ից (Սեպտեմբեր 23) 36 օր յետոյ բաւական լաւ համընկնում է Գիւտ Սուրբ Խաչի<sup>20</sup> շարժական<sup>21</sup> տօնի հետ: Արեւածագի դիտման օրը ինքնին կարելոր է, սակայն եթէ միւս երեք ուղղութիւններով կարելի կը լինէր դիտել միայն աստղեր, ապա բնական է, որ այս ուղղութիւններով եւս դիտարկենք տեսանելի պայծառութեան աստղերի հնարաւոր դիտումները: Այսինքն, եթէ բոլոր 4 վէմերը կապուած են Հարթակ 3-ի հետ եւ դրանցից երկուսի ուղղութեամբ կարելի է դիտել միայն աստղեր, ապա տրամաբանական է ենթադրել, որ թիւ 7 եւ 201 վէմերի գագաթներին նոյնպէս դիտուած լինեն աստղերի ծագումներ, մանաւանդ որ թիւ 7 վէմի վերնամասի անկեան ուղղութեամբ նոյնպէս խաւարածրային լուսատուների անցումներ հնարաւոր չեն: Միւս 2 ուղղութիւններով (Հարթակ 3-ից թիւ 19 եւ թիւ 27 վէմերի ուղղութեամբ) կարելի կը լինէր դիտել միայն հարաւային երկնակամարի աստղերի ծագումներ: Արդ տեսնենք, թէ ի՞նչ աստղեր եւ ո՞ր թուականներին են դիտելի եղել նշուած ուղղութիւններով:

16 Այստեղ եւ յաջորդիւ տրուած են հետեւեալ յապաւումները. Գարնանային գիշերահաւասար - ԳԳ, աշնանային գիշերահաւասար - ԱԳ, ամառային արեւադարձ - ԱԱ եւ ձմեռային արեւադարձ - ԶԱ:

17 Հաշուարկուած է  $\varepsilon(5800 \text{ BC}) = 24^\circ 12' 08.4''$  Խաւարածրային անկեան դէպքի համար:

18 ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՕՐԱՅՈՅՅ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2022, 41:

19 ՕՐՄԱՆԵԱՆ Մ. արք., *Ծիսական քառարան*, 1979, Յուլիան 1, 66:

20 Նշուած տօների մանրամասն ֆնկտեանը այստեղ չենք անդրադառնալ:

21 ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՕՐԱՅՈՅՅ, նշ. աշխ., 161:



Աղիւսակ 1. Հարթակ 3-ի եւ թիւ 7, 19, 27 եւ 201 վեմերի օգնութեամբ ձեւաւորուող ուղղութիւնները եւ վեմերի միջեւ եղած հեռաւորութիւնները: Բոլոր տուեալները ստացուել են 2020ի չափագրութեան արդիւնքում:

| Ուղղութիւնը          | Ազիմուտ<br>22 | Բարձ-<br>րութիւն | Վեմի եւ<br>Հարթակի միջեւ<br>մետրական<br>հեռաւորութիւնը | Վեմերի միջեւ<br>մետրական<br>հեռաւորութիւն-<br>ները |
|----------------------|---------------|------------------|--------------------------------------------------------|----------------------------------------------------|
| Հարթակ 3-27          | 345°32'       | 2°44'            | 13,697                                                 | 7-27 = 44,645<br>7-19 = 28,677<br>19-27 = 29,036   |
| Հարթակ 3-19          | 318°06'       | 1°39'            | 40,083                                                 |                                                    |
| Հարթակ 3-7           | 282°32'       | 2°49'            | 49,296                                                 |                                                    |
| Հարթակ 3-201         | 290°44'       | 2°13'            | 27,378                                                 |                                                    |
| Թիւ 7 վեմի<br>անկիւն | 230°06'       | 62°58'           | -                                                      |                                                    |

#### 4. ԴԻՏՆԵԼԻ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԸ ԵՒ ԴԻՏՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

«Զօրաց Քարեր» յուշարձանի ուսումնասիրութեան արդիւնքներին նուիրուած նախընթաց հրապարակումներում քննութեան են առնուած 3 հաւանական թուականներ, որոնք վերաբերում են Հնագոյն հայկական օրացոյցերին: Դրանք են՝ ն.թ. 9000թ. (Նախահայկեան օրացոյցի սկզբնաւորում)<sup>23</sup>, ն.թ. 5800թ. (Նախահայկեան օրացոյցում եւ յուշարձանում կատարուած որոշ փոփոխութիւնների ժամանակը)<sup>24</sup> եւ ն.թ. 2341թ. (Հայկեան օրացոյցի սկիզբը)<sup>25</sup>:

22 Ազիմուտները հաշուարկուած են հարաւի կետից, ինչպէս ընդունուած է աստղագիտութեան մէջ:

23 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայոց նախահայկեան օրացոյցի սկիզբը, ի «Բազմավեպ», 174 (2016), 3-4, էջ 11-63:

24 MALKHASYAN, H., *The observation of Angegh-Vulture (Cygnus) constellation in Armenia 32 000 years ago*, Communications of BAO, Vol. 67, Issue 1, 2020, pp. 27-36. DOI: 10.52526/25792776-2020.67.1-27.

25 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայոց տումարի որոշ հարցերի մասին. Հայոց Բուն թուական, ի «Էջմիածին», 1985, 1, 51-57; 2-3, 72-80, նաեւ՝ ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, 147-209:

Ինչպէս փաստում են ուսումնասիրութիւնները<sup>26</sup> այս թուականները լիովին ներդաշնակ են յուշարձանի շահագործման աստղագիտական «չերտերին»<sup>27</sup>: Աւելին, ստացուած արդիւնքները խօսում են այն մասին, որ յուշարձանի կենտրոնական կրոմլեխը կառուցուել է զիտումների նպատակով կիրառուել է Ն.Ք. 9000ին, որից յետոյ նոյն գործիքները ծառայեցուել են այլ լուսատուների զիտումների համար Ն.Ք. 5800ին<sup>28</sup>: Հարթակ 3-ի օգնութեամբ ձեւաւորուած ուղղութիւնների քննութիւնը բացայայտում է ճիշդ նման պատկեր (աղիւսակներ 2, 3, 4, 5, եւ 6)<sup>29</sup>: Մասնաւորապէս պարզում է, որ Հարթակ 3-ից թիւ 7 եւ 27 վէմերի գազաթների ուղղութեամբ վերոնշեալ 3 թուականներից միայն Ն.Ք. 9000ին է հնարաւոր եղել դիտել մինչեւ 2<sup>m</sup>.50 տեսանելի պայծառութեան աստղերի ծագումներ, միւս ուղղութիւններով աստղերի ծագումներ դիտելի են եղել արդէն աւելի ուշ «չերտերում» (Ն.Ք. 5800ին եւ Ն.Ք. 2341ին): Բացի այդ, թիւ 7 վէմը իր գործառնութիւնը լիարժէք կարող էր կատարած լինել այս երեք թուականներից միայն Ն.Ք. 9000ին: Այսինքն թիւ 7 վէմի օգնութեամբ ձեւաւորուող երկու (վերնամասի անկեան եւ Հարթակ 3-ից դեպի վէմի գազաթ) ուղղութիւնները կարող էին զուգահեռ կիրառուել միայն Ն.Ք. 9000ին (աղիւսակներ 4 եւ 5): Ն.Ք. 5800ին աստղերի զիտումների համար կիրառելի է միայն վէմի անկեան ուղղութիւնը, իսկ Հարթակից դրա գազաթին կարելի է դիտել միայն արեւածագ, Լուսնի եւ տեսանելի մոլորակների ծագումներ: Նկատի առնելով թուարկուած հանգամանքները՝ սոյն աշխատանքում կ'անդրադառնանք միայն Ն.Ք. 9000ին դիտելի աստղերի ֆնուրեանը, ուշ շրջանների ֆնուրիւնը թողնելով յետագային:

26 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ. - ՄԱԼԽԱՍԵԱՆ, Հ., ԳԶ. աշխ., 2021; ՄԱԼԽԱՍԵԱՆ, Հ., «Զօրաց Քարեր», ԳԶ. աշխ., 2021; MALKHASIAN, op.cit, 2022, ՄԱԼԽԱՍԵԱՆ «Զօրաց Քարեր», ԳԶ. աշխ., 2023, անդ:

27 Հնագիտական շերտերի հետ տարընթերցում եւ թիրիմացութիւն չառաջացնելու նպատակով շերտ բառը այսուհետ կ'օգտագործենք չակերտներում:

28 ՄԱԼԽԱՍԵԱՆ Հ., «Զօրաց Քարեր», ԳԶ. աշխ., 2023, անդ:

29 Աղիւսակներում բերուած բոլոր տուեալները վերցուած են Stellarium v0.20.4 համակարգչային փաթեթից ([www.stellarium.org](http://www.stellarium.org)):

**Աղիւսակ 2.** Հարթակ 3-ից թիւ 27 վեմի գագաթի ուղղութեամբ մինչեւ 2<sup>մ</sup>.50 տեսանելի աստղային մեծութեամբ դիտելի աստղերը եւ դրանց տուեալները:

| Ժամանակը                         | Ն.Ք. 2341                      | Ն.Ք. 5800                      | Ն.Ք. 5800                      | Ն.Ք. 9000                      |
|----------------------------------|--------------------------------|--------------------------------|--------------------------------|--------------------------------|
| Աստղը                            | ι Carinae                      | γ Velorum                      | ε Canis majoris                | λ Velorum                      |
| Տեսանելի աստղային մեծութիւնը (m) | 2 <sup>մ</sup> .20             | 1 <sup>մ</sup> .75             | 1 <sup>մ</sup> .50             | 2 <sup>մ</sup> .20             |
| Հակումը (δ)                      | -45°38'                        | -45°34'                        | -45°00'                        | -45°42'                        |
| Ուղղակի ծագումը (α)              | 7 <sup>ժ</sup> 18 <sup>ր</sup> | 4 <sup>ժ</sup> 14 <sup>ր</sup> | 2 <sup>ժ</sup> 02 <sup>ր</sup> | 2 <sup>ժ</sup> 40 <sup>ր</sup> |
| Ազիմուտը (A)                     | 345°32'                        | 345°32'                        | 345°32'                        | 345°38'                        |
| Բարձրութիւնը (h)                 | 2°46'                          | 2°50'                          | 3°26'                          | 2°44'                          |
| Արեգակնային ամբարձում            | Ա.Գ.+4օր                       | Ա.Գ.-30օր                      | Ա.Ա.+33օր                      | Ա.Ա.+40օր                      |
| Ակրոնական ամբարձում              | Գ.Գ.-6օր                       | Գ.Գ.-45օր                      | ՋԱ.+21օր                       | ՋԱ.+27օր                       |

**Աղիւսակ 3.** Հարթակ 3-ից թիւ 19 վեմի գոգաւորութեան ուղղութեամբ մինչեւ 2<sup>մ</sup>.50 տեսանելի աստղային մեծութեամբ դիտելի աստղերը եւ դրանց տուեալները:

| Ժամանակը                         | Ն.Ք. 2341 | Ն.Ք. 5800                       | Ն.Ք. 5800                       | Ն.Ք. 5800                       | Ն.Ք. 9000 |
|----------------------------------|-----------|---------------------------------|---------------------------------|---------------------------------|-----------|
| Աստղը                            | -         | α Pavonis                       | α Ceti                          | ζ Orionis                       | -         |
| Տեսանելի աստղային մեծութիւնը (m) | -         | 1 <sup>մ</sup> .90              | 2 <sup>մ</sup> .50              | 1 <sup>մ</sup> .85              | -         |
| Հակումը (δ)                      | -         | -34°06'                         | -34°08'                         | -33°08'                         | -         |
| Ուղղակի ծագումը (α)              | -         | 11 <sup>ժ</sup> 17 <sup>ր</sup> | 20 <sup>ժ</sup> 09 <sup>ր</sup> | 23 <sup>ժ</sup> 23 <sup>ր</sup> | -         |
| Ազիմուտը (A)                     | -         | 318°41'                         | 318°18'                         | 317°33'                         | -         |
| Բարձրութիւնը (h)                 | -         | 1°39'                           | 1°39'                           | 1°59'                           | -         |
| Արեգակնային ամբարձում            | -         | Ա.Գ.+29օր                       | Գ.Գ.-21օր                       | Ա.Ա.-37օր                       | -         |
| Ակրոնական ամբարձում              | -         | Գ.Գ.+16օր                       | Ա.Ա.+38օր                       | Ա.Գ.+30օր                       | -         |



**Աղիւսակ 4.** Հարթակ 3-ից թիւ 7 վեմի գագաթի ուղղութեամբ մինչեւ 2<sup>մ</sup>.50 տեսանելի աստղային մեծութեամբ դիտելի աստղերը եւ դրանց տուեալները:

| Ժամանակը                         | Ն.Ք. 2341                      | Ն.Ք. 2341                       | Ն.Ք. 5800 | Ն.Ք. 9000                       |
|----------------------------------|--------------------------------|---------------------------------|-----------|---------------------------------|
| Աստղը                            | $\gamma$ Orionis               | $\alpha$ Scorpii                | -         | $\beta$ Geminorum               |
| Տեսանելի աստղային մեծութիւնը (m) | 1 <sup>մ</sup> .60             | 1 <sup>մ</sup> .05              | -         | 1 <sup>մ</sup> .15              |
| Հակումը ( $\delta$ )             | -7°45'                         | -7°37'                          | -         | -8°10'                          |
| Ուղղակի ծագումը ( $\alpha$ )     | 1 <sup>ժ</sup> 43 <sup>ր</sup> | 12 <sup>ժ</sup> 29 <sup>ր</sup> | -         | 21 <sup>ժ</sup> 38 <sup>ր</sup> |
| Ազիմուտը (A)                     | 282°23'                        | 282°12'                         | -         | 282°48'                         |
| Բարձրութիւնը (h)                 | 2°58'                          | 2°58'                           | -         | 2°49'                           |
| Արեգակնային ամբարձում            | Ա.Ա.-26օր                      | Ա.Գ.+18օր                       | -         | Գ.Գ.-33օր                       |
| Ակրոնական ամբարձում              | Ա.Գ.+46օր                      | Գ.Գ.+10օր                       | -         | Ա.Ա.+37օր                       |

**Աղիւսակ 5.** Թիւ 7 վեմի անկեան ուղղութեամբ մինչեւ 2<sup>մ</sup>.50 տեսանելի աստղային մեծութեամբ դիտելի աստղերը եւ դրանց տուեալները:

| Ժամանակը                         | Ն.Ք. 2341 | Ն.Ք. 5800                      | Ն.Ք. 9000                       |
|----------------------------------|-----------|--------------------------------|---------------------------------|
| Աստղը                            | -         | $\beta$ Ursae majoris          | $\gamma$ Cygni (Sadr)           |
| Տեսանելի աստղային մեծութիւնը (m) | -         | 2 <sup>մ</sup> .30             | 2 <sup>մ</sup> .20              |
| Հակումը ( $\delta$ )             | -         | 52°00'                         | 52°34'                          |
| Ուղղակի ծագումը ( $\alpha$ )     | -         | 0 <sup>ժ</sup> 20 <sup>ր</sup> | 14 <sup>ժ</sup> 03 <sup>ր</sup> |
| Ազիմուտը (A)                     | -         | 230°40'                        | 229°50'                         |
| Բարձրութիւնը (h)                 | -         | 63°26'                         | 62°38'                          |
| Առերեւոյթ անյետացումը            | -         | Ա.Ա.-1օր                       | ԶԱ.-19օր                        |
| Առերեւոյթ յայտնուելը             | -         | ԶԱ.-11օր                       | Ա.Ա.-27օր                       |

**Աղիւսակ 6.** Հարթակ 3-ից թիւ 201 վեմի բարձրադիր կետի ուղղութեամբ մինչեւ 2<sup>մ</sup>.50 տեսանելի աստղային մեծութեամբ դիտելի աստղերը եւ դրանց տուեալները:

| Ժամանակը                         | Ն.Ք. 2341                      | Ն.Ք. 5800                       | Ն.Ք. 9000 |
|----------------------------------|--------------------------------|---------------------------------|-----------|
| Աստղը                            | ζ Orionis                      | η Tauri (Pleiades)              | -         |
| Տեսանելի աստղային մեծութիւնը (m) | 1 <sup>մ</sup> .85             | 2 <sup>մ</sup> .85              | -         |
| Հակումը (δ)                      | -14°18'                        | -14°17'                         | -         |
| Ուղղակի ծագումը (α)              | 2 <sup>ժ</sup> 09 <sup>ր</sup> | 20 <sup>ժ</sup> 57 <sup>ր</sup> | -         |
| Ազիմուտը (A)                     | 290°37'                        | 290°40'                         | -         |
| Բարձրութիւնը (h)                 | 2°13'                          | 2°15'                           | -         |
| Արեգակնային ամբարձում            | ԱԱ-11օր                        | ԳԳ-38օր                         | -         |
| Ակրոնական ամբարձում              | ԶԱ-29օր                        | ԱԱ+30օր                         | -         |

#### 4.1. ԹԻՒ 7 ՎԷՄԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Հասկանալի է, որ այս վեմի քննութեան ընթացքում անհրաժեշտ է դիտարկել երկու ուղղութիւն՝ վեմի վերնամասի անկեան եւ Հարթակ 3-ից դիտողի համար դէպի դրա գազաթը դիտելիս գոյացող ուղղութիւնները (աղիւսակ 1): Տրամաբանական է ենթադրել, որ այս երկու ուղղութիւնները ինչ-որ կերպ միմեանց կապուած պիտի լինեն: Այսինքն, եթէ վեմը կիրառուել է երկու ուղղութիւնների համար, իսկ նման իրողութիւնը<sup>30</sup> յուշարձանում միակը չէ, ապա այս ուղղութիւններով դիտելի լուսատուները որեւէ առնչութիւն պիտի ունենան միմեանց հետ: Աղիւսակ 4-ի եւ 5-ի բովանդակութիւնից պարզ երեւում է, որ այս երկու ուղղութիւններով լուսատուներ դիտելի են եղել ուղղութիւններից միայն մէկով: Թէպէտ վերը տեսանք նաեւ Հարթակ 3-ից թիւ 7 վեմի գազթին դիտող արեւածագի օրը (ԱԳ+19օր): Այն փաստօրէն,

30 ՄԱԼԻԱՍԵԱՆ, Հ., «Զօրաց Քարեր», նշ. աշխ., 2021, անդ:

Համապատասխանում է  $\alpha$  Scorpii ասղի արեգակնային ամբարձման օրուան (ԱԳ+18օր)<sup>31</sup> ն.Ք. 2341ին (աղիւսակ 4): Միեւնոյն ժամանակ, այս նոյն թուականին թիւ 7 վէմի անկեան ուղղութեամբ մինչեւ 2<sup>m</sup>.50 տեսանելի աստղային մեծութեան որեւէ աստղի անցում տեղի չի ունեցել: Ուստի առաւել հաւանական ժամանակը թիւ 7 վէմի համար պէտք է ընդունել ն.Ք. 9000 թուականը, երբ դրա գագաթին ծագել է  $\beta$  Geminorum աստղը, իսկ վէմի վերնամասի անկեան ուղղութեամբ անցում է կատարել  $\gamma$  Cygni աստղը (աղիւսակներ 4 եւ 5): Արդ դիտարկենք այս երկու աստղերի դիտման պայմանները առաւել մանրամասն:

Նախ նկատենք, որ  $\beta$  Geminorum աստղի դիտում հէնց այս նոյն թուականին արդէն իսկ բացայայտուել է թիւ 12 եւ 13 վէմերի անկիւնների քննութեան ընթացքում<sup>32</sup>, որտեղ դրա առեւելոյթ անհետացումը դիտելի է եղել արեւածագից անմիջապէս առաջ ԱԱ-ից 48օր անց: Թիւ 7 վէմի պարագայում ունենք նոյն աստղի ակրոնական ամբարձումը<sup>33</sup> ԱԱ-ից 37 օր անց: Փաստօրէն մօտ 10 օր տարբերութեամբ դիտելի է եղել նոյն աստղը՝ սկզբում մայրամուտից յետոյ ծագելը, ապա արեւածագից առաջ արեւմտեան հորիզոնի վրայ անհետանալը: Այն փաստը, որ յուշարձանում երկու տարբեր կերպ ձեւաւորուող ուղղութիւններ ուղղութեան միեւնոյն հակում ունեցող լուսատուներին, ինքնին, կարելորդ նկատառում է: Միւս կողմից էլ թիւ 7 վէմը, ինչպէս եւ թիւ 12 եւ 13 վէմերը տեղակայուած են կենտրոնական շեղանկիւնաձեւ վիմաշրջանի վրայ, ինչը նոյնպէս կարելորդ դիտարկում է: Միեւնոյն ժամանակ պէտք է նշել, որ թիւ 13 վէմի վերնամասի անկիւնը ուղղութեամբ է  $\alpha$  Cygni աստղին նոյն ն.Ք. 9000 թուականին ԱԱ-ից 44 օր առաջ<sup>34</sup> մայրամուտից յետոյ: Նոյն թիւ 13 վէմի օգնութեամբ դիտելի է եղել նաեւ  $\beta$  Geminorum աստղը: Փաստացի ունենք երկու վէմեր (թիւ 7 եւ 13), որոնք երկուսն էլ կապուած են նոյն համաստեղութիւնների աստղերին՝ (Երկուորեակ եւ Անգղ

31 Մէկ օրուայ տարբերութիւնը մման խնդիրների պարագայում էական չէ եւ կարելի է անտեսել:

32 MALKHASYAN, H., On "Observational Instruments" composed of Stones No. 12, 13 and 14 of "Zorats Qarer" Monument. ComBAO, 2022, Vol. 69, Issue 1, 100-121. DOI: <https://doi.org/10.52526/25792776-2022.69.1-100>: Նաե՛ւ ՄԱՆԻԽԱՍԵԱՆ Հ., «Զօրաց Քարեր», նշ. աշխ., 2023, անդ:

33 Մայրամուտից յետոյ ծագելը:

34 ՄԱՆԻԽԱՍԵԱՆ, Հ., «Զօրաց Քարեր», նշ. աշխ., 2023, անդ:



(Կարապ): Նշուած առնչութիւնները բաւական խօսու են եւ թոյլ են տալիս թիւ 7 վէմի կիրառումը որպէս դիտողական գործիք համարել, սակայն համոզուած լինելու համար հարկաւոր են առաւել ցցուն հիմնաւորումներ:

Նայենք յուշարձանում թիւ 7 վէմի տեղակայումը: Յուշարձանի կառուցուածքում այն կենտրոնական դիրք է զբաղեցնում, իսկ յուշարձանն էլ, ինչպէս բազմիցս ցոյց է տրուել, կառուցուած է Անգղ (Կարապ) համաստեղութեան պայծառ աստղերի դասաւորութեան նմանութեամբ<sup>35</sup>: Այս հանգամանքը հաշուի առնելով, նկատում ենք, որ թիւ 7 վէմի տեղակայումը համապատասխանում է Անգղ համաստեղութեան կենտրոնական  $\gamma$  Cygni աստղի դիրքին եւ այդ վէմի անկեան ուղղութեամբ էլ դիտելի է եղել հենց նոյն աստղը: Արժէ յիշել նաեւ՝ Պորտասարում պեղուած Անգղի հարթաքանդակը, որ վերաբերում է նոյն հազարամեակին<sup>36</sup>, իսկ ինքը հնավայրը կապուած է Երկուորեակների պաշտամունքին<sup>37</sup>: Եթէ համադրենք Զօրաց Քարեր յուշարձանի յատկազիծը Անգղի վերոնշեալ պատկերի հետ<sup>38</sup>, ապա թիւ 7 վէմի դիրքը կը համընկնի Անգղի պարանոցի հատուածի V-աձեւ փորուածքի գագաթին (նկար 9 Ա.):

Արդ փորձենք հասկանալ թէ ի՞նչ նշանակութիւն ունի այսպիսի յօրինուածքը: Թերեւս ամենապարզ բացատրութիւնը գտնում ենք աւանդաբար մեզ հասած մի ժողովրդական սովորութեան բովնդակութեան մէջ՝ թռչնի անրակոսկրով (հաւքաշ, ջնեզ) գրազ գալու սովորութեան, որ խիստ տարածուած է հայ ընտանիքներում<sup>39</sup>:

35 ՎԱՀՐԱԴԵԱՆ, Վ. - ՎԱՀՐԱԴԵԱՆ Մ., *Քարահունց յուշարձանի անուան մասին*, ի «Բազմավեպ», 168 (2010), 1-2, 161-177: MALKHASIAN, H., ComBAO, 2020, Vol. 67, Issue 1, 27-36.

36 SCHMIDT, K. - DIETRICH, O., *A Radiocarbon Date from the Wall Plaster of Enclosure D of Göbekli Tepe.*, Neo-Lithics 2/10 (2010): 82-83.; DIETRICH O., *Radiocarbon dating the first temples of mankind.* Comments on 14C-Dates from Göbekli Tepe. Zeitschrift für Orient – Archäologie. 2011. 4, 12–25.

37 COOMBS A., *Chips off the Block. Twin Symbolism in the Emergence of Neolithic Monuments and Cosmology*, Journal of Skyscape Archaeology, 2023, Vol. 9, No. 1, 32-66.

38 ՎԱՀՐԱԴԵԱՆ Վ. - ՎԱՀՐԱԴԵԱՆ Մ., անդ: Նաեւ՝ MALKHASIAN H., *ibid.*:

39 Այս մասին առաւել մանրամասն տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., *Վաղ քրոնոզի դարի հայկական օրացոյց ըստ Քեթիի քրեղանի զարդապատկերների*, 320 էջ, Գլուխ Գ(ա): Այսուհետ ԲՐՈՒՏԵԱՆ Գ., *Քրեղան*:

Ահա այս ոսկրի տեսքով էլ պատկերում է Անգղի կուրծքը Պորտասարի յիշեալ ֆանդակի վրայ: Հայերէնում նման ձեւուածքը կոչւում է նաեւ խեչակ, որի արմատը խաչ բառն է<sup>40</sup>, որ բնորոշ է նաեւ այս համաստեղութեան մէկ այլ անուանմանը՝ *Խաչ կամ Հիւսիսային Խաչ*<sup>41</sup>: Յատկանշական է, որ հէնց թիւ 7 վեմը իր ձեւուածքով (նկար 3) շատ ակնառու կերպով կրկնում է սրածայր մասով դէպի վեր ուղղուած «հաւքաշի» ձեւը: Աւելին, պէտք է նշել, որ մշտապէս այս ոսկրը կիսելիս այն կոտրւում է հէնց զագաթի հատուածից կամ դրանից մի փոքր վեր: Թիւ 7 վեմի պարագայում էլ ունենք, որ հէնց համապատասխան տեղում կտրուածքի անկիւնը ուղղուած է *γ Cygni* աստղին այսինքն Անգղի կրծքին (կրծոսկրին կամ անրակոսկրին): Այս ամենին իհարկէ լրացնում է աստղի Al Sadr al Dajjah արաբական անուանումը, որ նշանակում է հէնց «Հաւի կուրծք»<sup>42</sup>: Ուշադրութեան է արժանի նաեւ այս գրագի բովանդակութիւնը: Երկու հոգով ոսկրը կոտրում են երկու մասի, ընդ որում ամէն մի կտորը մնում է գրագի մասնակիցներից մէկի մօտ: Պարտւում է նա ով վերցնում է խաղընկերօրջից առաջարկուող ցանկացած իր, իսկ եթէ վերցնում է, ապա պարտադիր պէտք է ասի, որ յիշում է գրագի մասին<sup>43</sup>: Ի՞նչ կարող է յուշել այս աւանդույթը: Պարզ է միայն այն, որ եթէ սա որպէս ծէս կատարուել է տարուայ մէջ որեւէ յստակ օր, ապա դրանից առաջուայ եւ յետոյի օրերի միջեւ յստակ տարանջատում կայ, այսինքն յստակ տարանջատում է ժամանակը, անցեալն ու ապագան եւ «անթոյլատրելի» է մի ժամանակից միւսին որեւէ բանի անցում: Այսպիսի պատկերացումը յիշեցնում է ամանորեայ աւանդույթը, իմա հին տարուայ եւ նոր տարուայ սահմանազատումը<sup>44</sup>: Ուստի տեսնենք թէ որքանով է այն կապուած *γ Cygni* աստղի դիտման օրուայ հետ:

40 ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, Ս., *Հայերէն քացատրական քառարան*, Բ., 1944, ցուցակ 1, 259:

41 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Բ., *Հայ աստղագիտութեան պատմութիւն*, ԵՊՀ հրտ., «Միտք», Երեւան 1968, 92:


42 ALLEN, R. H., *Star Names Their Lore and Meaning*, 1963, 196-197.

43 Այս գրագին մանուկ հասակում քազմաթիւ անգամ ինքս մասնակից եմ եղել, նշուած խաղաձեւը յատկապէս արտայայտուած է Տաւուշի մարզի վերին Ծաղկաւան գիւղում, որ մօրս ծննդավայրն է:

44 Այս մասին մանրամասն տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ Գ., *Օրացոյց Հայոց*, Էջմիածին 1997, 356-363:



Ա.



Բ.

Նկար 9. Ա. Պարտասարի D կառույցի թիւ 43 սեան Անգղի պատկերը:  
 Զօրաց Քարեր յուշարձանի յատակագիծը: Սլաֆները ցուցանում են  
 Անգղի պատկերի V-աձև փորուածքի գագաթը եւ յուշարձանի  
 համապատասխան տեղում թիւ 7 վեմի տեղակայումը:  
 Բ. Հայկական Զարդապատկեր Մաշտոցեան Մատենադարանի թիւ  
 4827 ձեռագրի 81ա թերթին:

Աստղի դիտման օրը ԱԱ-ից 27 օր առաջուայ ժամանակն է մայրամուտից անմիջապէս յետոյ, նոյնն է թէ Նաւասարդի տօնից<sup>45</sup> 20 օր առաջ: Մէկ այլ առիթով ցոյց է տրուել, որ Նաւասարդի օրուանից առաջ եղել է 40-օրեայ պահքի ժամանակահատուած<sup>46</sup>, ուստի նտացում է, որ այս աստղի դիտման օրը համապատասխանում է այդ 40օրեայ պահքի միջնակէտին, այսինքն կիսում է արգելքների ժամանակահատուածը: Յիշենք նաեւ, որ այս 40 օ-

45 Եթէ ընդունենք, որ Նաւասարդի տօնը ԱԱ-ից 8 օր առաջուայ կէտն է: Տե՛ս ծանօթ. 23 եւ 25:

46 ՄԱԼԽԱՍԵԱՆ, Հ., 2021, նոյն տեղում:



րերին համապատասխանում են կենտրոնական վիմաշրջանի թուով 40 վէմերը<sup>47</sup>, որնցից են հէնց թիւ 7 եւ 27 վէմերը, որոնք էլ իրէնց դիրքով, փաստօրէն կիսում են շեղանկեան 40 վէմերը երկու 20ական մասերի (նկար 1): Կիսելու գործողութիւնը նոյնպէս ներդաշնակում է վէրը նշուած աւանդոյթին եւ  $\gamma$  Cygni աստղի դիտման օրուան ն.Ք. 9000 թուականին: Նշուած 40 օրերը նուիրուած են Կոյսի անդրաշխարհում գտնուելու ժամանակահատուածին: Միեւնոյն ժամանակ 40 վէմերից կազմուած շեղանկիւն վիմաշարը նոյնպէս իզական նշանակութիւն ունի, ինչի մասին նախկինում արդէն խօսուել է<sup>48</sup> Քեթիի քրեղանի զարդապատկեր-օրացոյցի շեղանկիւն պատկերների գուգադրութեան առիթով: Աւելին, քրեղանի շեղանկիւն պատկերները համեմատուում են հայկական մի նշանազրի (յափշտակել) հետ<sup>49</sup>, որում յատուկ շեշտուած են երկու հանդիպակաց գազաթները (աղիւսակ 7): Նոյն գաղափարը տեսնում ենք յուշարձանի կենտրոնական շեղանկեան սուր անկիւնների գազաթներում տեղակայուած թիւ 7 եւ 27 վէմերի դէպքում (նկար 1): Նման առնչութիւնները գալիս են հաստատուելու, որ գործ ունենք միեւնոյն մտածողութեան հետ:

Աղիւսակ 7. Հայկական նշանագրերը եւ դրանց իմաստները<sup>50</sup>

| Նշանագիր                                                                            | Իմաստը    |  | Նշանագիր                                                                            | Իմաստը  |
|-------------------------------------------------------------------------------------|-----------|--|-------------------------------------------------------------------------------------|---------|
|  | յափշտակել |  |  | առագաստ |
|  | յափշտակել |  |  | կոյս    |

Արդ տեսնենք թէ ի՛նչ կապ կայ Երկուորեակ համաստեղութեան եւ թիւ 7 վէմի միջեւ: Այս առիթով տեղին է յիշել հայ-


47 ՄԱԼԽԱՍԵԱՆ Հ., «Զօրաց Քարեր», նշ. աշխ., 2023, անդ:

48 Տե՛ս օրինակ, ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Քրեղան: ՄԱԼԽԱՍԵԱՆ Հ., «Զօրաց Քարեր», նշ. աշխ., 2023, անդ:

49 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Քրեղան, Գլուխ Գ(դ):

50 ԱՐԲՈՒՆԱՍԵԱՆ, Ա., Հայոց գիր եւ գրչութիւն, ԵՊՀ հրտ. Երեւան 1973, 234-241:

կական ժողովրդական հէքեաթներից մի օրինակ<sup>51</sup>, որտեղ առասպելական թռչնի գլուխը բաժին է ընկնում մեծ, իսկ սիրտը՝ փոքր եղբօրը<sup>52</sup>: Միւս կողմից Երկուորեակ եղբայրները իրենք էլ թռչուններ են եւ այս թռչունների յստակ համեմատութիւնները մանրամասն քննարկուած են նախորդ յօդուածում<sup>53</sup>: Բացի այդ նման համեմատականներ են բերուած նաեւ Քեթիի քրեղանի վրայ առկայ թռչնի պատկերի վերլուծութեամբ<sup>54</sup>, որին այստեղ արժէ աւելի մանրամասն անդրադառնալ: Նշեալ պատկերի վրայ (նկար 10) ԱԱ-ից 8 օր առաջուայ կէտը (տարեմուտը) Գրիգոր Բրուտեանը տեղադրում է թռչնի կտուցին (4 նիշ), իսկ թռչնի գլուխն ու պարանոցը (միասին պարունակում են 21 նիշ-օրերը)՝ ընդհուպ թռչնի կուրծքը, տեղադրում է այդ կէտից սկսած մինչեւ ԱԱ եւ դրանից յետոյի ժամանակահատուածում եւ վերագրում տարուայ առաջին՝ Նաւասարդ ամսուան: Վ Cygni աստղի դիտման օրը, սակայն, ԱԱ-ից 27 օր առաջուայ կէտն է (աղիւսակ 5): Այստեղ առաջանում է հակասութիւն, քանի որ աստղի գաղափարական բովանդակութիւնը համապատասխանում է թռչնի կրծքին իսկ դիտման օրը տարբերում է թռչնի պատկերի վերլուծութեամբ նախկինում ստացուած արդիւնքից:



Նկար 10. Քեթիի բրեղանի Ա երեսի զարդապատկերի  
թռչունը. ն.թ. 32-28րդ դարեր: Գծապատկերը  
Համագասպ Խաչատրեանի

51 «Կոյսը մամ սըերտը», Հայ ժողովրդական Հեքեաթներ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1966, 212-217:

52 Նոյն թռչնի սիրտը ինչ-որ ժամանակով կուլ է տալիս մաւե մրա հարսնացուն:

53 MALKHASIAN, H., 2022, 69(1), ibid.

54 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Քրեղան, Գլուխ Գ(ա):

Այս հակասութեան ամենապարզ լուծումը կարող է լինել թոչնի կտուցից յետհաշուարկը: *Այսինքն, եթէ ԱԱ-ը տեղադրենք կտուցին, ապա՝ 4 (կտուց) + 9 (գլուխ) + 12 (պարանոց) = 25օր յետհաշուարկ կատարելով կը հասնենք թռչնի կրծքի բեկուածքին, որն էլ շատ մօտ է համապատասխան աստղի դիտման օրուան (ԱԱ-27, մայրամուտ<sup>55</sup>):* Այս պարագայում, արդէն, եթէ ընդունում ենք, որ թոչնի կտուցը համապատասխանում է ԱԱ-ին, ապա ԱԱ-ից յետոյի օրերի շարունակութիւնը թոչնի կտուցի եւ փուջի միակ նշանահատիկի միմեանց «կցումն» է, որ շատ հաւանական տարբերակ է<sup>56</sup>, եթէ «թոչունը կուտը կտցելով այն անմիջապէս տեղափոխի փուջի մէջ» կամ «կուլ տայ Արեգակը»: *Միւս կողմից էլ քրեղանի թռչնի պատկերում քուջի 1 հատիկը կից է թռչնի թեւին: Սա չի հակասում նաեւ Պորտասարի անգղի պատկերազրույթեանը, որտեղ ձուն (Արեւը) տեղադրուած է թռչնի կտուցի եւ թեւի միջեւ, իսկ նոյն անգղի ուռուցիկ «որովայնը» (ստամոքսը, քուջը) տպաւորութիւն է ստեղծում, թէ թռչունը կուլ է տուել Արեւը (ձուն) (նկար 9 Ա): Այստեղ իհարկէ կայ մի աշխարհից մէկ այլ աշխարհ տեղափոխուելու գաղափար, որ զուգահեռ է նաեւ տարեմուտի (հին եւ նոր տարուայ սահմանի) գաղափարին: Միեւնոյն ժամանակ  $\gamma$  Cygni աստղի դիտումը վերաբերում է մայրամուտին՝ Արեգակի անդրաշխարհ գնալուն, ինչը նոյնպէս գաղափարապէս բացատրում է այս համատեքստում: Նման լուծումը, այսինքն դիտուած աստղի պայմաններին, քրեղանի եւ Պորտասարի թռչնապատկերի համեմատական վերլուծութիւնը, կարող է լիարժէք լինել, քանի որ այս պարագայում ԱԱ-ի եւ դրանից 25 օր առաջուայ կետերը պատկերի վրայ միմեանց կից են եւ ուրեմն երկուսն էլ կարող են կապուած լինել  $\gamma$  Cygni աստղի (թոչնի կրծուկի, փուջի) դիտման օրուան եւ*

55 Այստեղ, փաստօրէն, ստացում է 1օրեայ տարբերութիւն: Այսպէս, եթէ դիտումը վերաբերում է ԱԱ-ից 27օր առաջուայ մայրամուտին, ապա ստացում է, որ ԱԱ-ի եւ դիտման օրուայ միջեւ 26 օր է: Միեւնոյն ժամանակ, եթէ ԱԱ-ի լուսաբացը վերագրենք փուջի միակ նշանահատիկին (նկար 10), ապա կը ստանանք հէնց 26 օր ( $1+4+9+12$ ):

56 Թոչնի պատկերը վերաբերում է տարուայ ամառ ժամանակահատուածին, տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ. *Քրեղան*, ուստի ԱԱ-ի յարակից ժամանակը թոչնի պատկերից դուրս դիտար է պատկերացնել: Միւս կողմից, եթէ այս թոչունը «Ոսկի Ձուն» (Արեգակը) բերելու գործառնոթ ունի (տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., *Քրեղան*), ապա տրամաբանական է սպասել, որ այն նախապէս պիտի լինի թոչնի ներսում:



քովանդակութեամբ: Այսպիսի մեկնաբանութեանը որպէս եւս մէկ հիմնաւոր փաստարկ կարող է ծառայել հայկական մի զարդապատկեր<sup>57</sup> (նկար 9 Բ.), որտեղ մարդագլուխ թռչնի ձեռքի գունդը մեկնաբանուած է, որպէս «ոսկէ խնձոր»<sup>58</sup>, որ նոյն Արեւի խորհրդանիշն է: Հայկական զարդանախշի եւ Պորտասարի անգղի հական տարբերութիւնն այն է, որ զարդապատկերում թռչունը պատկերուած է մարդկային գլխով: Այսպիսի պատկերացումը ուղղակիօրէն վկայում է թռչնի գլխի եւ թագաւորի կրտսեր որդու զուգահեռութեան մասին, ինչը մանրամասն հիմնաւորուած է վերոնշեալ քրեղանի թռչնապատկերի վերլուծութեան ընթացքում<sup>59</sup>: Զարդապատկերում ակնյայտ է նաեւ կուլ տալու գործողութիւնը, ինչպէս նաեւ բացառիկ պատկերագրական զուգահեռութիւնը Պորտասարի հարթաքանդակի հետ (նկար 9 Ա. եւ Բ.): Բերենք այս երկու պատկերներում առկայ մի քանի ընդհանրութիւններ.

1. գնդաձեւ մարմինը տեղակայուած է թեւի եւ կտուցի (բաց բերանի) միջեւ,
2. գլուխները ճաղատ են<sup>60</sup>,
3. պատկերուած է առանձին աչք<sup>61</sup> եւ 1 կլոր նիշ՝ գլխի կենտրոնում,
4. պարանոցի առաջին հորիզոնական գիծը ստորին ծնօտի ալիքաձեւ շարունակութիւնն է,
5. պարանոցի գծերը թուով 4 են. 4րդը անգղի դէպքում V-աձեւ է իսկ զարդանախշի վրայ կոր,
6. որովայնը ուռուցիկ է,
7. թեւերի պատկերումը ունի ոճական նոյնութիւն. «փետուրների» գծանշանները թուով 9 են:

57 ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, Զեռագիր քիւ 4827, քերթ 81ա:

58 ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Ա., Հայկական զարդարուեստ, Հիմնական մոտիւների ծագումն ու գաղափարական քովանդակութիւնը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1955, 501:

59 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Քրեղան, Գլուխ Գ(ա):

60 Սա կարելոք նկատուում է, քանի որ Հայ ժողովրդական որոշ հեքեաք-ներում առասպելական քոչունը նկարագրում է հեքեք «Բաշալ»: Տե՛ս օրինակ՝ ՀԺՀ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966, հատ. 5, «Բաշալ մոտը», 458: Նոյն տեղում տե՛ս նաեւ «Բաշալ ախպերը», 629:

61 Հայկական զարդանախշի աչքը բաւական լաւ կրկնում է եգիպտական Հորի քաղէի ձախ աչքի տեսքը:


Եթէ հաշուի առնենք, որ այս երկու պատկերների ժամանակային տարբերությունը շուրջ 10.000 տարի է, ապա նկարագրուած գուգահեռները կարելի է համարել բացառիկ: Ուշադրութիւն է գրաւում նաեւ զարդանախշի որովայնի թուով 9 նշանահատիկները: Եթէ դրանց գումարենք գլխի 1 կլոր նշանը եւ ձեռքի «ոսկէ խնձորը», ապա կը լինի 11 նիշ: Միեւնոյն ժամանակ քննարկուող քրեղանի թռչնապատկերի որովայնում նշանները քուջից դէպի թեւը ունեն  $1 + 3 + 7 = 11$  դասաւորութիւնը (նկար 10): Այս ամէնը փաստում են թոչնի «Արեգակը կու տալու» գործողութիւնը եւ կապում են այս պատկերացումները Ա.Ա.-ի հետ:

Ուշագրաւ է նաեւ նման մի պատկեր Զօրաց Քարեր յուշարձանում, որ նկատուելի է մեր կողմից 2020 թուականին: Այն գտնւում էր պեղուած-բացուած<sup>62</sup> հատուածում՝ յուշարձանի հարաւային թեւի կենտրոնական մասում թիւ 84 եւ 85 վէմերից մօտ 4մ դէպի արեւմուտք, հողի մակերեւոյթից մօտ 1մ խորութեան վրայ: Եռանկիւնաձեւ բարաւորի աջ (հիւսիսային) կոտորուած յենասեան մօտ 30x90սմ մակերեսի վրայ առկայ են սանդղաձեւ ժայռապատկեր յիշեցնող փորագրութեան հետքեր եւ դրանից վար՝ հարթաքանդակ յիշեցնող մի հատուած, որ ուշադիր զննելիս ձեռագործ է թւում եւ թռչնի պատկեր է յիշեցնում<sup>63</sup>: Սակայն պնդել չի կարելի, քանի, որ պատկերը եւ ինքը քարը խիստ հողմահարուած են (նկար 11): Այս մասին մեզ հասանելի գրականութեան մէջ տեղեկոյթ չկայ: Պեղումներ իրականացնող հնագէտներն էլ դրա մասին հրապարակումներ չունեն, իսկ բանաւոր զեկոյցներում նման իրողութեան մասին չեն խօսել: Մնում է ենթադրել, որ կամ չեն նկատել խիստ հողմահարուած լինելու պատճառով կամ էլ կարեւորութիւն չեն տուել: Եթէ նման դիտարկումները գոյութեան իրաւունք ունեն, ապա այսպիսի պատկերագրութիւնը գաղափարակից է վերոնշեալ Պորտասարի անգղին եւ Հայկական զարդանախշին: Աւելին վերին հատուածի «ժայռապատկերը», որ կենաց

62 ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍԵԱՆԻ ղեկավարութեամբ հնագիտական խումբը 2013-2018 թուականներին բացել էին յուշարձանի այս հատուածը, որ ներկայումս փակուած (կոնսերւացուած) է: Նոյն հեղինակի բանաւոր զեկոյցներում այս կառուցուածքը նկարագրւում է որպէս դամբարանի դուռ:

63 Յաւոք աւելի պարզ լուսանկարներ եւ պատկերներ յետագայում հնարաւոր չի եղել ստանալ յուշարձանի այս հատուածի պահպանութեան նկատառումներով փակմամբ պայմանաւորուած: Մեր կողմից արուած լուսանկարներում պատկերը թռչուն է յիշեցնում, սակայն անհրաժեշտ է յըստակեցնել այս տեսակետը:

Ծառի գաղափար է պարունակում, յուշում է այն մասին, որ պատկերված «թռչունը» կարող է խորհրդանշել հենց Անգղ համաստեղութիւնը, որ երկնքում գրաւում է Ծիր Կաթնի միգամածութեան (հնարաւոր է կրել է նաեւ Կենաց Ծառի գաղափար) բաւականին տարածուն մի հատուած: Միւս կողմից էլ նշուած պատկերի տեղակայումը դռան աջակողմեան սեան վրայ, լիովին կարող է արտայայտել մի աշխարհից միւս աշխարհ անցումը: Աւելորդ է լինի նշել, որ Պորտասարի անգղը նոյնպէս պատկերուած է հենց սեան վրայ:



Նկար 11. Զօրաց Քարեր յուշարձանում նկարագրուած սեան լուսանկարները արուած են մեր արշաւախմբի կողմից 2020ին: Ժայռապատկեր-հարթաֆանդակով հատուածը շուրջանակի մէջ: Աջից գծապատկեր-պատմէն՝ ըստ յօդուածիս հեղինակի:

Իհարկէ այստեղ առաջանում են բազմաթիւ հարցեր, մասնաւորապէս տարեմուտի օրուայ հետ կապուած, քանի որ Գրիգոր Բրուտեանը բազմաթիւ հրապարակումներում տարեմուտի օրը (Նաւասարդի տօնը) տեղադրում է ԱԱ-ից 8 օր առաջ: Մեր առաջարկած լուծման պարագայում Նաւասարդեան ծօրեայ տօները տեղադրում են 4 (կտուց) + 1 (ֆուջ) + 3 (թելի առանձին 3 նշանահատիկները) հատուածում, որի «կիզակէտը» փաստօրէն ԱԱ-ն է եւ նշուած է առանձին եզակի նշանահատիկով: Այսպիսի տեղադրութեան օգտին են յուշարձանի ուսումնասիրութիւնների որոշ արդիւնքներ, մասնաւորապէս մի քանի աստղերի հնարաւոր դիտումներ:



Այսպէս, ն.Ք. 9000ին յուշարձանում ԱԱ-ից 5 օր առաջ (մայրամուտին) դիտուել է α Boötis (Յորենքաղ մշակ), ԱԱ-ին՝ α Virginis (Հասկ, Կոյս), α Ophiuchi (Թագաւորի կրտսեր որդու գլուխ) եւ α Cassiopeiae, իսկ ԱԱ-ից 4 օր յետոյ γ Cassiopeiae (Մայր աստղածութիւն) աստղերը<sup>64</sup>: Եթէ Նաւասարդեան տօները նուիրուած են հացահատիկի բերքահաւաքին, Թագաւորի փոքր որդուն եւ Մայր աստղածուհուն<sup>65</sup>, ապա դիցաբանական բովանդակութեամբ աւելի համապատասխան աստղերի դիտումներ նշուած օրերին դժուար է պատկերացնել: Ուստի Նախահայկեան օրացոյցի համար գոյութեան իրաւունք ունի նաեւ, Նաւասարդ ամսուայ եւ Նաւասարդի տօնի դիրքի հետեւեալ փոխարարներուօրինը, որ բխում է Զօրաց Քարեր յուշարձանի գործառոյթից, դրան զուգադրուած Պորտասարի թիւ 43 սեան անգղի հարթաքանդակի, հայկական զարդանախշի եւ վաղ բրոնզի դարի Քեթիի քրեղանի թռչնապատկերի վերլուծութիւններից, ինչպէս նաեւ հայկական բանահիւստութեան եւ աւանդութեան բովանդակութիւնից: Նաւասարդեան Տօնայ տօներով աւարտում էր Նաւասարդ ամիսը: Նաւասարդ ամիսը սկսուել է ԱԱ-ից մօտ 27 օր առաջ: Նաւասարդեան տօների 3 օրերը սկսուել են ԱԱ-ից 4 օր առաջ եւ աւարտուել են ԱԱ-ից 4 օր յետոյ: Այս տօների կիզակէտը 5րդ օրն է՝ ԱԱ-ը<sup>66</sup>: Նաւասարդ ամսուայ սկիզբը եւ Նաւասարդեան տօների 5րդ օրը՝ ԱԱ-ը, խիստ կապակցուած են Անգղ համաստեղութեան γ Cygni աստղի հետ (թռչնի կրծոսկրի, դրա հաւաքով գրազ գալու աւանդութեան, բուջի): Այստեղ թուացեալ հակասութիւններ կան ընդունուած տեսակէտների առումով, սակայն յետագայ մանրամասն վերլուծութիւնները կարող են տալ նաեւ դրանց ամբողջական բացատրութիւնը: Այսպիսի եզրակացութիւնների օգտին բազմաթիւ այլ փաստարկներ էլ կան, սակայն այստեղ դրանց մանրամասն չենք անդրադառնայ, քանի որ դրանք պահանջում են առանձին ծաւալուն նիւթերի՝ օրինակ Քեթիի քրեղանի եւ Զօրաց Քարեր յուշարձանի, հնարաւորինս ամբողջական վերլուծութիւն:

64 MALKHASYAN, H.A., ComBAO, 2022, 69(2), 324-339. Տե՛ս նաեւ ԲՐՈՒՏԵԱՆ, Գ. - ՄԱԼԽԱՍԵԱՆ, Հ., ևճ. աշխ., ՄԱԼԽԱՍԵԱՆ Հ., «Զօրաց Քարեր», ևճ. աշխ., 2021, անդ:

65 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., «Բազմավէպ», 2016, 3-4, անդ:

66 Յատկանշական է, որ պատկադրութեան ծէսը համընկնում է Նաւասարդեան տօների միջնակէտին: Տե՛ս օրինակ՝ ԲՐՈՒՏԵԱՆ Գ., Օրացոյց Հայաց, 1997, 340:

## 4.2. ԹԻՒ 27 ՎԷՄԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս տեսնում ենք Հաքթակ 3-ից թիւ 27 վէմի գագաթի ուղղութեամբ ԱԱ-ից 40 օր անց դիտելի է եղել ժամանակակից Առագաստ համաստեղութեան  $\lambda$  Velorum աստղի արեգակնային ամբարձումը (աղիւսակ 2): Յատուկ նշելի է, որ Ն.Ք. 5800ին նոյն աստղի արեգակնային ամբարձումը ԱԱ-ից 42 օր յետոյ դիտելի է եղել Հաքթակ 1-ից թիւ 66 վէմի գագաթին<sup>67</sup>, այսինքն շուրջ 3200 տարուայ տարբերութեամբ յուշարձանում առկայ է նոյն աստղի արեգակնային ամբարձման դիտման հնարաւորութիւն տարբեր ուղղութիւններով, սակայն տարուայ միեւնոյն օրը (երկու օրուայ տարբերութիւնը նման խնդիրներում էական չէ), ինչը նշանակում է, որ այս օրը եւ յատկապէս դիտուած աստղը բացառիկ կարեւոր նշանակութիւն են ունեցել յուշարձանը շահագործողների համար: Նախ նկատենք, որ նշուած օրը լաւ համապատասխանում է եկեղեցական 4րդ տաղաւար տօնի՝ Աստուածածնի վերափոխման օրուան (Խաղողօրհնէք)<sup>68</sup>: Փորձենք պարզել թէ ինչպէս են միմեանց կապուած Առագաստի աստղը ( $\lambda$  Velorum) եւ Խաղողի օրհնութեանը նուիրուած այս կարեւոր տօնը: Աստղը աւանդաբար համարւում է երկնային Արգո Նաւ համաստեղութեան (Argo Navis) Առագաստի (Vela) ամենապայծառ աստղերից մէկը<sup>69</sup>: Սակայն քննարկուող հազարամեակում (Ն.Ք. 9000) Արգո Նաւ համաստեղութեան հիմնական մասի աստղերը յուշարձանի լայնութիւնից տեսանելի չեն եղել՝ չափազանց հարաւային դիրքանիւններով (կօրդինատներով) պայմանաւորուած: Հետեւաբար պէտք է հնարաւոր համարել այն, որ նշուած ժամանակներում այս աստղին կարող էր տրուել այլ դիցաբանական բովանդակութիւն, մանաւանդ որ ստոյգ յայտնի չէ, թէ ե՛րբ է համաստեղութեանը տրուել նաւի գաղափարը: Այնուամենայնիւ Աստուածածնի վերափոխումը կապուել է նախաքրիստոնէական Խաղողօրհնէքին թերեւս ոչ պատահաբար: Այդ

67 ԲՐՈՒՏԵԱՆ Գ. - ՄԱԼԽԱՍԵԱՆ Հ., նշ. աշխ., աղիւսակ 3:

68 Տօնը շարժական է: Տե՛ս ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑ, նշ. աշխ.: Թեպէտ այսօր տօնը նշում է Օգոստոսի 15-ին մօտ, որ շուրջ 2 շաբաթով տարբերւում է աստղի դիտման օրուանից, սակայն եթէ հաշուի առնեմք այն, որ տօնին նախորդել է պահեցողութիւն իսկ որոշ շրջաններում այն տօնուել է աւելի վաղ (վարդավառիւն)՝ տե՛ս ՕՐՄԱՆԵԱՆ Մ. արք., *Ծիսական քառարան*, 1979, Ցուցակ 1, էջ 35, ապա այս տարբերութիւնը կարելի է լաւ համընկում համարել:

69 ALLEN, R. H., *Star Names Their Lore and Meaning*, Dover edition, 1963, 64-74:

մասին են վկայում բազմաթիվ ժողովրդական աւանդական տօներգեր, որոնք նուիրուած են ե՛լ խաղողի գովքին, ե՛լ Աստուածամօրը<sup>70</sup>: Սակայն հետաքրքրական է Աստուածածնի վերափոխման օրուան վերաբերող Մովսէս Խորենացու վկայութիւնը: Պատմահայրը գրում է. «...Պօղոսն ամէնօրինեալ սուրբ Կոյսին ասում է. "Աստուծոյ Բանի անարա՛տ առագաստ, ..."»<sup>71</sup>: Ըստ աւանդութեան Գաբրիէլ հրեշտակապետն յայտնուում է Աստուածածնին եւ աւետում Վերափոխման մասին ասելով. «Մայր սրբութեան եւ առագաստ երանութեան... հասել է քո ժամանակը՝ փոխադրուելու այս աշխարհից առ Աստուած»: Երկու դրուագներում էլ Աստուածամօրը դիմելիս օգտագործուում է «առագաստ» այլաբանութիւնը, թերեւս որպէս արարման՝ Աստուծոյ Խօսքը հասունացնող եւ մարմին տուող, սրբազան «վայրի». «Ո՛վ ամենասուրբ Կոյս, էական Բանին մայր եւ կենդանութեան ծնալու եւ առագաստ անլուծանելի անմահ փեսայի»<sup>72</sup>: Սուրբ Կոյսի եւ առագաստի զուգադրութիւնը արտայայտուած է նաեւ Հայկական նշանագրերում (աղիւսակ 7): Հայերէնում նաւի անբաժան մաս լինելուց զատ առագաստը ունի նաեւ բազմաթիւ այլ իմաստներ (վարագոյրի, սենեակի այն հատուածի, որ առանձնացուում է յատկացուում է նորապսակներին (հարսնաւան), հարսանեկան առաջին գիշերի, քողի, ընդհանրապէս թաղանթի, էգ ծաղիկների լայն բացուած փողու ընդունարանի եւ այլն), սակայն ամէնից հետաքրքիրը այն է, որ առագաստ է կոչուում նաեւ հնձանի քար ու կրով շինած այն մասը, ուր լցնում են խաղողը եւ կոխտելով ճմլում՝ խաղողի հիւթը հանելու համար<sup>73</sup>: Սա, փաստօրէն, խաղողից գինի ստանալու առաջին փուլն է, որ կատարուել է նաեւ Խաղողօրհնէքին: Եթէ քրիստոնէական ընկալումներում պահպանուած Աստուածամօր վերափոխման մասին պատկերացումները առնչուում են այս օրուայ երկնային իրադարձութիւններին, ինչը վերը ակնյայտ է, ապա պէտք է դիտարկել նաեւ Մայր

70 ԽԱԶԱՏՐԵԱՆ, Ռ., *Առաջնապտղի ծիսախորհուրդն ու խաղող-գինի-կարաս գովերգութիւնները հայ ծիսերգային քանակիւսութեան մէջ*, Պատմա-բանասիրական հանդէս, 2007, 2, 273-286:

71 ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, *Աստուածաբանական երկեր*, քրգմ. գրաբարից Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2007, 20:

72 Մէքրերուած է Աստուածամօր ննջումի օրուայ աւանդութիւնից: Տե՛ս ՀԱՄԱՐԱՐԱՌ ՅԱՅՄԱՒՈՒՐՔ, խմբ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ, ԵԶՆԻԿ արք., Ը., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 2009, 189:

73 ՄԱԼԽԱՍԵԱՆ, Ս., *Հայերէն քացատրական քառարան*, Ա., 1944, ցուցակ 1, 213:



աստուածութեանը խորհրդանշող համաստեղութեան դիրքային առանձնայատկութիւնները հէնց նոյն օրուայ երկնակամարում: Մի առիթով մենք մանրամասն քննութեան ենք առել Մայր աստուածութեան երկնային զուգահեռը եւ այն նոյնացրել ենք ժամանակակից Կասիոպէ համաստեղութեան հետ<sup>74</sup>: Յիշենք, որ Կասիոպէ համաստեղութեան աստղերի հնարաւոր դիտումներ արդէն վեր են հանուած յուշարձանի թիւ 158 վէմի մեծ անկեան ուղղութեամբ՝ նոյն թուականին (ն.Ք. 9000)<sup>75</sup>: Վրջիններս վերաբերում են  $\alpha$  եւ  $\gamma$  Cassiopeiae աստղերի առերեւոյթ անհետացմանը (արեւածագից անմիջապէս առաջ) ԱԱ-ից համապատասխանաբար 1 եւ 4 օր յետոյ<sup>76</sup>: Նոյն համաստեղութեան միւս աստղերը նոյն ուղղութեամբ դիտելի են եղել նաեւ ն.Ք. 5800ին, արդէն ԱԱ-ից մօտ 30 օր յետոյ<sup>77</sup>: Պէտք է նկատի առնել նաեւ, որ Մայր աստուածութիւնը նշուած ժամանակներում ունեցել է երկակի ընկալում՝ երկուորեակներ ծնող կոյսի եւ մօր (օրինակ՝ արտատէր պառաւի), որոնք հերթափոխում են միմեանց<sup>78</sup>: Պարզ է, որ տուեալ դէպքում գործ ունենք «Մեծ Մօր» հետ, քանի որ ըստ աւանդութեան Սուրբ Կոյս Մարիամը ծնեց 15 տարեկանում իսկ վերափոխման աւետիսի ժամանակ 60ամեայ էր<sup>79</sup>: Ուրեմն անհրաժեշտ է դիտարկել Կասիոպէ համաստեղութիւնը եւ ոչ թէ Կոյս: Դիտարկումներից պարզ է դառնում, որ ն.Ք. 9000 թուականին ԱԱ-ից 40 օր անց, երբ թիւ

74 ՄԱԼԽԱՍԵԱՆ, Հ., «Զօրաց Քարեր», նշ. աշխ., 2021, 149-199:

75 Նոյն համաստեղութեան աստղերի դիտումներ չի կարելի բացառել նաեւ թիւ 197 վէմի անկեան ուղղութեամբ ն.Ք. 9000 թուականին: Տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ. - ՄԱԼԽԱՍԵԱՆ Հ., նշ. աշխ., 107-148:

76 ՄԱԼԽԱՍԵԱՆ Հ., «Զօրաց Քարեր», անդ, աղիւսակ 3:

77 Անդ:

78 Պարզեցուած նկարագրելու համար պատկերացնենք, որ հին տարուայ Մայր աստուածուհին (մայրը) իր դիրքը փոխանցում է նոր տարուայ Մայր աստուածուհուն (կոյս հարսին), որն էլ դառնալու է նոր տարուայ մայրը եւ յաջորդ տարի, արդէն, դիրքը զիջելու է եկող կոյս-հարսին, եւ այսպէս շարունակ: Այս պատկերացումների մասին մանրամասն տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., անտիպ մեկագրութիւն:

79 ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Աստուածաբանական երկեր, նշ. աշխ., 2007, 18: Յայամաւորքների տարբեր օրինակներում Աստուածամօր տարիքը տրուում է 58, 59 կամ 60: Տե՛ս ՀԱՄԱԲԱՐՔԱՌ ՅԱՅՄԱՆՈՒՐԻ, Ը., 2009, 166-195: Տպաւորութիւն է ստեղծուում, որ նախնաբար այս թուականը ցուցանել է 2 լուսնային ամիս տեւողութիւն: Այն, որ Սուրբ Կոյսը յղութեան աւետիսը ստացաւ 14ում եւ ծնեց Յիսուսին 15ում, խօսում է Լուսնի փուլերի (լիալուսնի) մասին՝ ինչպէս Սասնայ Ծոեր էլպոսի Մայր դիցուհին՝ Ծովիմարը, որ 14 աւուր Լուսնի կնմանէր:

27 վէմի գազաթին Հարթակ 3-ից դիտելի է եղել Առագաստի նշուած աստղի արեգակնային ամբարձումը, Կասիովպէ համաստեղութեան բոլոր պայծառ աստղերը գտնուել են անմիջապէս արեւմտեան հորիզոնից ցած: Այսինքն Կասիովպէի բոլոր պայծառ աստղերի տիեզերական անկումները (արեւածագից առաջ անկումները) դիտելի են եղել մինչ այդ օրը: Նշելի է, որ ԱԱ-ից 37 օր յետոյ (երբ նոյն Հարթակ 3-ից թիւ 7 վէմի գազաթին դիտելի է եղել  $\beta$  Geminorum աստղի ակրոնական ամբարձումը) Կասիովպէ համաստեղութեան աստղերը յայտնուել են իրենց բարձրակէտերում (կոլմինացիա): Այս երկնային իրադարձութիւնները լաւ համապատասխանում են հէնց Աստուածամօր «յերկրէ յերկինս» վերափոխման գաղափարին: Ուստի աւելի մանրամասնեմք աւանդութիւնը: Գաբրիէլ հրեշտակապետը առաջին անգամ<sup>80</sup> վերափոխման աւետիսը յայտնում է 30 օր առաջ<sup>81</sup>: «Եւ դարձաւ (սբ. Կոյսը) ի տուն իւր՝ կոչեաց գազգական իւր եւ գալլ սուրբ կանայսն եւ ասաց նոցա լուցանել ջախս<sup>82</sup> եւ դամպարս, եւ մնալ առ նմա աւուրս գ. (երեմ)»<sup>83</sup>: Եթէ 37 օրերից հանենք նշուած 30 եւ 3-ը, ապա կը ստացուի ԱԱ-ից 4 օր յետոյի ժամանակը ( $37-30-3=4$ ), որ, ինչպէս վերը նշուեց, ճշգրիտ համապատասխանում է թիւ 158 վէմի մեծ անկեան ուղղութեամբ  $\gamma$  Cassiopeiae աստղի առերեւոյթ անհետանալու օրուան: Աւելին, եթէ հաշուի առնենք, որ Աստուածածինը վերափոխուում է եւս երեք օր անց, ապա կը ստանանք ԱԱ-ից 40 օր յետոյի ժամանակը, որ եւ նոյնն է ինչ  $\lambda$  Velorum աստղի արեգակնային ամբարձման օրը: Որքանո՞վ է Աստուածամօր վերափոխման մասին քրիստոնէական աւանդութիւնը կապուած ն.Ք. 9000ի երկնային իրադարձութիւնների հետ, դժուար է ստոյգ եզ-

80 Վերափոխման աւետիսը յայտնում է 3 անգամ: Առաջին անգամ վերափոխումից 30 օր առաջ, ապա առաջին յայտնումից 14 օր յետոյ եւ երրորդ անգամ վերջինից 12 օր յետոյ: Դրանից յետոյ (ըստ ամենայնի 27րդ օրը). «Յայնժամ ձայն եղել առ նա յերկնից որ ասէր: Ոչ թողից գեղ մայր իմ տիրուհի, այլ եկից առ քեզ՝ եւ կատարեսցին խնդրուածք քո որ առ իս»: Այնուհետեւ երեմ օր շրջեց. «... եւ գերիս աւուրս շրջեցաւ...: Եւ դարձաւ ի տուն իւր...»: ՅԱՅՄԱԻՈՒՐԻՔ, տպարան Գրիգոր Մարգուանեցու, Կ. Պոլիս 1730, Ժբ-Ժբ:

81 Անդ:

82 Աստղերի անկումները կարելի է ընկալել իբրեւ տուն մտնել, իսկ լուցանել ջախս՝ իբրեւ արեւածագ: Արդ այս երկուսը միասին գուգադիպում է աստղերի տիեզերական անկումների (արեւածագից առաջ աստղի անկում) հետ:

83 ՅԱՅՄԱԻՈՒՐԻՔ, 1730, անդ:

րակացնել: Սակայն փաստն այն է, որ հնարաւոր դիտումները բացառիկ զուգահեռութիւն ունեն այս աւանդութեան մանրամասներին հետ:



Նկար 12. Դիոնիսոսը նաւակում: Սեւ թասի նկարագրադրումը ըստ Էֆեսկիասի, մ.թ. 530: Միւնիխէն, Անտիկ կիրառական արուեստի թանգարան:

Առաքաստի եւ խաղողագործութեան զուգադրման համատեքստում արժէ յիշել նաեւ խաղողագործութեան եւ գինեգործութեան հովանաւոր յունական աստուածութեան՝ Դիոնիսոսի (հուլմ. Բաքոս), նաւարկութեան մասին պատմող մի հնագոյն դրոշագ<sup>84</sup>: Այստեղ Դիոնիսոսը խաղողի վազերով եւ սաղարթներով է պարուրում նաւի կայմը եւ առաքաստը<sup>85</sup> (նկար 12): Յունական դիցաբանութիւնը, արդէն, վկայում է նաւի եւ խաղողագործութեան զուգակից կապի մասին, որ ինչպէս տեսնում ենք ն.թ. 9000-ին արտայայտուած է Զօրաց Քարեր յուշարձանի գործառութային բովանդակութեան մէջ: Աւելին, թիւ 27 վէմի ձեւաւածքը կարելի է նաեւ նաւի առաքաստի նմանեցնել, որ իր փքուած կողմով ուղղուած է յստակ դէպի Արեւելք (կարծես քամին Արեւմուտքից է փչում) (նկարներ 2, 6 եւ 7):

84 Այս մասին ինձ յուշել է Արմէն Դաւթեանը, ինչի համար յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը:

85 *Мифы народов мира*, эл. изд., Энци., Москва 2008, 314-317.



Այն, որ նշուած հազարամեակում այգեգործութիւնը (յատկապէս խաղողագործութիւնը) բաւական զարգացած պիտի լինէր կասկած չի յարուցում մի քանի հիմնաւոր նկատառումներով: Նախ Նախահայկեան օրացոյցը (ն.թ. 9000) իր կառուցուածքով եւ բովանդակութեամբ երկրագործի օրացոյց է եւ սերտ կապակցուած է հացահատիկի մշակման փուլերի հետ<sup>86</sup>: ԱԱ-ից 40 օր յետոյի ժամանակը հացահատիկի մշակման որեւէ կարեւոր փուլի հետ (վար ու ցանք, հունձ, կալ) չի համընկնում, իսկ այգեգործութիւնը մարդու անկասկած շատ աւելի վաղ ձեռքբերում է (ապրուստի միջոց) քան հացահատիկի կանոնական մշակումը: Միեւնոյն ժամանակ սոյն տարածաշրջանում խաղողագործութեան<sup>87</sup> (գինեգործութեան նաեւ հացահատիկի մշակութեան) հնագիտական հաւաստի փաստեր են գտնուած Վայոց Ձորի Թուշունների քարանձաւում (Արեւի-1), որոնք վերաբերում են ընդհուպ պղինձ-քարիդարեան ժամանակներին (ն.թ. V-IV հազարամեակներ)<sup>88</sup>, թէպէտ աշխարհում յայտնի են շատ աւելի վաղ ժամանակների գինեգործութեան մասին վկայող նիւթեր<sup>89</sup>:

#### 4.3. Թիւ 7 ԵՒ 27 ՎԷՄԵՐԻ ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ԵՒ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՊԸ

Ինչպէս տեսանք Հարթակ 3-ից թիւ 7 վէմի գագաթի ուղղութեամբ դիտելի է եղել β Geminorum աստղի ակրոնական ամբարձումը ԱԱ-ից 37 օր անց, իսկ ԱԱ-ից 40 օր անց λ Velorum աստղի արեգակնային ամբարձումը նոյն Հարթակ 3-ից թիւ 27 վէմի գագաթին: Եթէ 2,5 օրեայ նման տարբերութիւնը առ ոչինչ

86 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայոց նախահայկեան օրացոյցի սկիզբը, ԳԶ. աշխ., անդ:

87 SMITH, A. – BAGOYAN, T. – GABRIELIAN, I. – PINHASI, R. – GASPARYAN, B., *Late Chalcolithic and Medieval Archaeobotanical Remains from Areni-1 (Birds' Cave)*, Armenia, *STONE AGE IN ARMENIA*, edited by Boris GASPARYAN and Makoto ARIMURA, Published by Center for Cultural Resource Studies, Kanazawa University, Kanazawa, Japan, 2014, 233-260.

88 BARNARD, H. – DOOLEY, A.N. – ARESHIAN, G. – GASPARYAN, B. – FAULL, K.F., *Chemical evidence for wine production around 4000 BCE in the Late Chalcolithic Near Eastern highlands*, in *Journal of Archaeological Science* 38 (2011) 977-984.

89 MILLER, N. F., *Sweeter than wine? The use of the grape in early western Asia*. *Antiquity*, 2008, Vol. 82, Issue 318, 937-946. DOI: <https://doi.org/10.1017/S0003598X00097696>.

համարենք<sup>90</sup>, ապա կը ստացուի, որ գործ ունենք մոյն օրուայ մայրամուտի եւ արեւածագի հետ: Այս հանգամանքը միանգամից միմեանց է կապում երկու վեմերի գործառույթները: Սակայն, եթէ օրը առնչուում է խաղողի օրհնութեանը, ապա պէտք է  $\beta$  Geminorum աստղի դիցաբանական նկարագիրը եւս կապուած լինի օրուայ խորհրդին: Աւելին, պէտք է ի նկատի ունենալ, որ թիւ 7 վեմի գագաթի ուղղութեամբ կարելի է եղել դիտել նաեւ արեւածագը ԳԳ-ից 19 օր առաջ եւ ԱԳ-ից 19 օր յետոյ: Արդ այս հանգամանքները նայենք մանրամասնօրէն:

Առաջին հերթին դիտարկենք ԱԱ-ից 37 օր յետոյի մայրամուտից անմիջապէս յետոյի պահը, երբ դիտելի է եղել  $\beta$  Geminorum աստղի ակրոնական ամբարձումը: Լինելով Երկուորեակ համաստեղութեան ամենապայծառ աստղը, իր դիցաբանական բովանդակողութեամբ այն համարուում է հայր աստուծոյ որդին: Ընդհանրապէս աստղի ակրոնական ամբարձումը (մայրամուտից յետոյ ծագելը) կարելի է ընկալել ե՛ւ որպէս նոր կեանք, ե՛ւ որպէս մահ, ե՛ւ որ աւելի ճիշդ է, այս երկու գաղափարը կողք կողքի<sup>91</sup>: Հայր Աստուծոյ որդուն կեանքի եւ մահուան գաղափարի հետ միասին գինեգործուութեան համատեքստում դիտարկումը յիշեցնում է Յիսուսի խօսքերը, երբ վերցնում է անխառն գինու բաժակը. «Սա մոր ուխտի իմ արիւնն է, որ հոսելու է շատերի համար»<sup>92</sup>: Գինու որպէս արիւն հոսելը մահուան գաղափար է կրում, իսկ ինքը գինին կենարար է. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթէ չուտէք մարդու Որդու մարմինը եւ չըմպէք Նրա արիւնը, ձեր մէջ կեանք չեք ունենայ»<sup>93</sup>: Այսինքն խաղողից գինու ստացումը նախ պտղի մահ է, որից ծնւում է կենաց ըմպելիքը: Միով բանիւ քրիստոնէական պատկերացումներում լիարժէք արտայայտուած են հնագոյն ժամանակներում երկնային լուսատուների շարժին համադրուած աշխարհընկալումը եւ երկրագործական կանոնակարգը:

Եթէ Երկուորեակ համաստեղութեան  $\beta$  Geminorum աստղը ընկալուել է իբրեւ Հայր Արտուծոյ Որդի, ապա հարկ է պատասխանել նաեւ այն հարցին թէ, ի՞նչպէս է խաղողագործութեան հետ

90 Նկատի է առնուած այն, որ երկու դիտումների օրուայ սխալը ընդունենք մէկական օր:

91 Այս մասին տե՛ս նաեւ ԲՐՈՒՏԵԱՆ, Գ. - ՄԱԼԽԱՍԵԱՆ, Հ., «Զորաց Քարեր», մշ. աշխ., անդ:

92 Մկ 14, 23-24:

93 Յհ 6, 55:

առնչվում այս աստղի արեգակնային ամբարձման օրը (ԳԳ-ից 33 օր առաջ)<sup>94</sup> (աղիւսակ 4) եւ նոյն ուղղութեամբ Արեւածագի օրերը (ԳԳ-ից 19 օր առաջ եւ ԱԳ-ից 19 օր յետոյ): Նկատենք, որ ԳԳ-ից 33 օր առաջուայ օրը լաւ համընկնում է Տեառնընդառաջին, իսկ դրանից 14 օր յետոյ, փաստօրէն, նոյն ուղղութեամբ դիտւում է արեւածագ: Ահա այս 14 օրեայ ժամանակահատուածը լաւ համընկնում է **այգեբացի՝** խաղողի որթերը հողից դուրս բերելու, ժամանակաշրջանին: Սա լիովին համապատասխանում է Հայր Աստուծոյ որդու (որթատունկի) վերստին ծնուելու՝ իմա աստղի արեգակնային ամբարձման, խորհրդին՝ եթէ յիշենք Յիսուսի մէկ այլ խօսքը, «Ես եմ մշմարիտ որթատունկը, եւ իմ Հայրը մշակն է»<sup>95</sup>: Միեւնոյն ժամանակ ԱԳ-ից 19 օր յետոյի ժամանակ, երբ հիմնականում աւարտուած է լինում խաղողի բերքահաւաքը, սկսում է **այգեթաղը**: Սա հետաքրքիր է նրանով, որ հայերը այգեգործական աշխատանքները հիմնականում կատարել են զոյգերով (այս զոյգը կոչւում է լուծ)<sup>96</sup>: Ահա այս զոյգը լաւ համապատասխանում է Երկուորեակ համաստեղութեան զոյգ եղբայրներին: Յիշենք, որ շումերական «Լուգալբանդան լեռան քարայրում» հնագոյն քերթուածում ասւում է. «Եղբայրն իր եղբօր հետ լուծք է կազմում...»<sup>97</sup>: Ինչպէս տեսնում ենք, դիտելի լուսատուները, դրանց դիցաբանական բովանդակութիւնը եւ դիտման օրերը լրիւ ներգաշնակութեան մէջ են այգեգործութեան (խաղողագործութեան) կարեւորագոյն փուլերի, եւ որ ամենակարեւորն է խաղողի օրհնութեան տօնի եւ գինու ստացման առաջին փուլի հետ:

Այսպէս պարզւում են որոշ լուսատուների գաղափարական-բովանդակային առնչութիւնները խաղողագործութեան-գինեգործութեան հետ: Մասնաւորապէս, Երկուորեակները՝ Հայր Աստուծոյ

94 Երկուորեակ համաստեղութեան  $\alpha$  եւ  $\beta$  Geminorum աստղերի հակումները քաւականին մօտ են (տարբերում են մօտ  $1.5^\circ$ -ով), եւ ծագում են մօտաւորապէս նոյն ուղղութեամբ 4-5 օր տարբերութեամբ:

95 Յհ 15, 1:

96 ԲԴՈՅԵԱՆ, Վ. Հ., *Երկրագործական մշակոյթը Հայաստանում*, ՀՍՍՀ ԳԱ ՀԱԻ, Երևան 1972, 145-146:

97 «Լուգալբանդան լեռան քարայրում», ԴԱԻԹԵԱՆ, Ա., (թրգմ.), տող 260: Թէպետ այս դրուագը վերաբերում է վար ու ցանքին, սակայն պետք է նկատի ունենալ, որ այստեղ խօսքը վերաբերում աւելի ուշ հազարամեակներին: Օրինակ մ.թ. 5800 թուականին Երկուորեակ համաստեղութեան տիրոյթում է ծագում արեգակը ԳԳ-ին, որ լաւ համընկնում է գարնանային վար ու ցանքին: Այս մասին տե՛ս ՄԱԼԽԱՍԵԱՆ, Հ., «Զօրաց Քարեր», ի «Բազմավէպ», (2023), նշ. աշխ., անդ:



զաւակները, հնարաւոր է պատկերացուել են նաեւ այգեգործութեան համատեքստում, իբրեւ խաղողի որթ, իսկ ստացուած գինին՝ իբրեւ դրանց արիւն: Առաջաստի աստղը, ըստ երեւոյթի, ունեցել է ինչ-որ առնչութիւն Մայր աստուածութեան հետ, մանաւանդ յայտնի է միջագետքում երկնքի այս հաստուածի կապը գլխաւոր դիցուհու՝ Նինմահի, հետ<sup>98</sup>, իսկ Հայոց Աստղիկ դիցուհու մասին էլ աւանդուած է, թէ իբր ծնունդ է Նոյեան Տապանի վրայ<sup>99</sup>: Հաւանական է, որ այս աստղը համարուել է հնձանի այն հաստուածը (առաջաստը) որտեղ արարւում է գինին: Թերեւս որոշ անյատակութիւն է մնում Մայր աստուածութեան Վերափոխման գաղափարի եւ նշուած օրուայ երկնային իրադարձութիւնների կապի առումով, ինչը արդէն, առանձին քննութեան առարկայ է<sup>100</sup>:

## ԱՐԴԻԻՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Մանրամասն վերլուծելով *Զօրաց Քարեր* յուշարձանում յայտնաբերուած երրորդ դիտահարթակի (Հարթակ 3) եւ դրա հետ կապակցուած թիւ 7 եւ 27 վէմերի<sup>101</sup> գործառութային եւ իմաստաբանական բովանդակութիւնը պարզւում է.

ա.- Հարթակ 3-ը թիւ 7 եւ 27 վէմերի հետ կիրառուել է որպէս համալիր «աստղադիտական գործիք» ն.թ. 9000ին՝ Նախահայկեան օրացոյցի սկզբնաւորման ժամանակ: Զի բացառուում նաեւ, որ աւելի ուշ հազարամեակներում (ն.թ. 5800 եւ 2341 թուականներին) Հարթակ 3-ը օգտագործուած լինի այս (նաեւ յատկապէս թիւ 19 եւ 201) ուղղորդիչ վէմերի հետ այլ լուսաստուների դիտումների նպատակով: Այսպիսի արդիւնքը թիւ 12 եւ 13 վէմերի քննութեան<sup>102</sup> հետ մէկտեղ փաստում է, որ յուշարձանի

98 HUNGER, H. – PINGREE, D., *Astral Sciences in Mesopotamia*, “Brill”, 1999, see Appendix, 274.

99 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., *Օրացոյց Հայոց*, Էջմիածին, 1997, 284-285:

100 Աստուածամնի վերափոխման աւանդութիւններում՝ ի մասնաւորի Յայսմաւորքներում, առկայ են բազմաթիւ երկնային իրադարձութիւնների այլաբանական դրուագներ, որոնք պահանջում են բաւական ծաւալուն վերլուծութիւն, ինչը կը թողնենք մէկ այլ առիթի:

101 Հարթակ 3-ի հետ կապակցուած են նաեւ թիւ 19 եւ 201 վէմերը, որոնց քննութիւնը յոգնածում կատարուած չէ: Այստեղ տրուած են միայն վէմերի մանրամասն նկարագրերը եւ դրանց օգնութեամբ ձեւաւորուող ուղղութիւններով դիտելի լուսատուները:

102 ՄԱԼԽԱՍԵԱՆ, Հ., «*Զօրաց Քարեր*», մշ. աշխ., 2023, 1-2, անդ.:

կենտրոնական շեղանկիւնաձեւ վիմաշարի սկզբնական օգտագործումը վերաբերում է Ն.Ք. 9000 թուականին:

բ.- Յուշարձանի թիւ 7 վէմը պէտք է դասել մինչ այժմ յայտնի միւս անկիւնաւոր վէմերի (թիւ 12, 13, 158, 197 եւ 198) շարքին: Թիւ 7 վէմի անկեան ուղղութեամբ Ն.Ք. 9000ին դիտուել է Անգղ(կարապ) համաստեղութեան  $\gamma$  Cygni (Սադր) աստղի առերեւոյթ յայտնուելը ամառային արեւադարձից 27 օր առաջ: Վէմի ձեւուածքը եւ գործառնոյթը խիստ կապակցուած են «հաւաշով» գրազ գալու ժողովրդական ականդոյթի (ծէսի) եւ տարեմուտի գաղափարի հետ:

գ.- Թիւ 7 վէմը՝ որպէս Հարթակ 3-ի ուղղորդիչ, Ն.Ք. 9000ին ծառայել է Երկուորեակ համաստեղութեան  $\beta$  Geminorum աստղի ծագումների դիտման նպատակով (չի բացառուում այլ լուսատուների դիտումներ նաեւ աւելի ուշ հազարամեակներում):

դ.- Հարթակ 3-ից թիւ 27 վէմի գագաթի ուղղութեամբ Ն.Ք. 9000ին դիտուել է Առաջաստ համաստեղութեան  $\lambda$  Velorum աստղի արեգակնային ամբարձումը ամառնային արեւադարձից 40 օր անց: Այս աստղի դիտումը սերտ աւելնչութիւններ ունի խաղողօրհնէքի տօնի, ինչպէս նաեւ Աստուածածնի վերափոխման քրիստոնէական ականդութեան հետ:

ե.- Առկայ են բացառիկ գաղափարական զուգահեռներ Զօրաց Քարեր յուշարձանի (մասնաւորապէս թիւ 7 վէմի), Պորտասարի թիւ 43 սեան անգղի հարթաքանդակի, վաղ բրոնզի դարի Քեթիի քրեղանի զարդապատկեր-օրացոյցում առկայ թռչնի պատկերի եւ Հայ միջնադարեան մի զարդանախշի միջեւ: Իմաստաբանական առումով նշուած զուգահեռները կրում են ամառնային արեւադարձը խորհրդանշող բնոյթ:

զ.- Նաւասարդեան ծօրեայ տօների սկիզբը աւելի ճիշդ է տեղադրել ամառնային արեւադարձից 4 օր առաջ (Ճրդ օրը համապատասխանում է ամառնային արեւադարձին): Ի տարբերութիւն հայկական քրիստոնէական օրացոյցերի Նախահայկեան օրացոյցում, ըստ երեւոյթի, Նաւասարդեան տօներով աւարտուել է արեւադարձից 27 օր առաջուայ կէտին:

Ստացուած արդիւնքները լաւ համապատասխանում են Հարթակներ 1-ի եւ 2-ի, թիւ 12, 13 եւ 14 վէմերի քննութեամբ նախկինում ստացուած արդիւնքներին եւ լրացնում են միմեանց: Միեւնոյն ժամանակ վեր են հանում որոշ նոր իրողութիւններ,

որոնք թոյլ են տալիս տարեպտոյտում Նաւասարդի տեղադրութեան հետ կապուած հարցերը դիտարկել նոր լոյսի ներքոյ: Հընադոյն հայկական օրացոյցերի ուսումնասիրութեան առումով սա յոյժ կարեւոր հանգամանք է, կարելի է ասել հիմնարար ելակէտ, որի ճշգրտումը կարող է լոյս սփռել անտիկ ժամանակների դեռեւս անյայտ օրացուցային մանրամասների վրայ: Միւս կողմից, ի յայտ է գալիս որոշ օրացուցային իրադարձութիւնների, դիտելի լուսատուների դիցաբանական նկարագրերի եւ խաղողագործութեան կարեւոր փուլերի ներդաշնակութիւն, ինչը, թերեւս, նոյնպէս նորոյթ կարելի է համարել յուշարձանի գործառութային նկարագրում: Ընդհանուր առմամբ պարզ է դառնում, որ Հարթակ 3-ը կարեւորագոյն գործառոյթ է ունեցել Ն.Ք. 9000ին, քանի որ կապուած է երկրագործ մարդու երկու կարեւորագոյն օրերի հետ. բերքահաւաքի՝ Նաւասարդի (հացահատիկի բերքահաւաք) եւ խաղողի օրհնութեան: Ուստի յոյժ կարեւոր է շարունակել այս համալիր «դիտողական գործիքի» ուշ «չերտերի» (Ն.Ք. 5800 եւ 2341 թուականների) եւ յուշարձանի միւս կառուցածքային միաւորների յետագայ ուսումնասիրութիւնը:

ՀԱՅԿ ՄԱՆԽԱՍԵԱՆ